

Ա. ՄԱՐԻՎԱՆՅԱՆ

358

ՑԱՆՈՎԻ  
ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ





Ա. ՄԱՐԵԿՆՅԱՆ

503


633-2/4  
Մ-12

ԱՅՈՒԿԱՆ Է 1983 թ.

# Ց ԱՆՈՎԻ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ

~~8203~~

A  $\frac{5}{18293}$



Գառ. խմբազեր՝ Լ. Սիլանյան  
Մանն. խմբազեր՝ Մ. Բաւմանյան  
Սըրազըր՝ Կ. Այվազյան  
Հանձնվել է արտադրութեան 1934 թ. մայիսի 3-ին  
Ոտարազրվել է ապազրելու 1936 թ. մայիսի 21-ին  
Գրառվիտ Ձ 225, տիրամ 2000, պատվեր Ձ 325

## ԱՌԱՋԱՐԱՆ

«Անասնապահութեան գործն իր ձեռքը պիտի վերցնի ամբողջ կուսակցութեանը, մեր վողջ աշխատավորութեանը—քե կուսակցականները և քե անկուսակցականները, ի նկատի ունենալով, զոր այժմ անասնապահութեան տրորելնն ախպիտի առաջնակարգ տրորելն և, զտրորոնն յերեկ յերկ և և արդեն հաշտութեամբ լուծված հացահատիկային տրորելնը» (ՄՏԱԼԻՆ)։

Մտերցալին Միութեան և նրա անբաժան մասնիկ կադետդ Մտերցալին Հայաստանի և կոնստիտուցիոն ուր որի վրա աւոււււ և փոխվել և նրա քարտեզը. ազրարային հետամնաց Հայաստանը պարձել և ինքուստարիալ ազրարային յերկիր—ստեղծվել ևն խոշոր ինքուստարիալ զիզանաներ, այն է՝ տղնձարգյոււնարերութեան, Յեռլինը, կուսակցը, Ձորաղնար, Քանաքեռողնար, կոնշերվշինը և այլն, և այլն, զորոնց մի շարք տանանլիները բաւարարելու գուցրնթաց վերակառուցվում և մեր սոցիալիստական դյուղտանանութեանը։

Հայաստանի ՁՅ շրջաններից ՁՕ-ը հարուստ ևն ընական խոտհարքներով, ալոյսան արոտներով և անասնարուծութեան դարգացմանը միանդամայն նպաստող կլիմայով։

Լոտին, Միսիանը, Աղբարան, Ապարանը և այլն, իրենց բնդարձակ արոտներով, խոտհարքներով և կլիմայով, դասվում ևն մտերցալին Միութեան տնասնապահական առաջավոր շրջաններին շարքում. որդաններ, վորսեղ արդյոււնաբերական անասնարուծություն ասեղծելու բոլոր նախապայմանները կան։

Մտքը գեր և խողում տնասնարուծութեանը մյուս՝ այսպես կաշված տեխնիկական կուլտուրաների շրջաններում։ Բամբակացան, ալուղործ, բանջարարուծ դյուղացիները նույնպես կարիք ևն զգում կաթնամթերքներին։

Բանլարական կենտրոնների (Յերևան, Ղափան, Ալանվերդի և այլն) ընականութեանը թարձ կաթնամթերքներով սպասարկելու գործում, խոշոր և անասնարուծութեան գերը։ Մեր կուսակցու-

թյունը հաջողութեամբ լուծեց հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների պրոբլեմը, ամենակարճ ժամանակում կրուձի նաև անասնաբուժութեան պրոբլեմը Ընկ. Ստյոխին ասում է. «Մենք ունենք պարզ նշաններ, վորոնք ցույց են տալիս մանր, ցածր ապրանքայնություն ունեցող տնտեսությունների անկայունութիւնը և տնտեսական անհուսալիութիւնն անասնապահութեան ասպարիզում: Յեղ իրոք, մանր, վտօխացած տնտեսութեան անասնապահութեան դիտարկումը վտանգն այն է, վոր թույլ չի տալիս և չի ասպահովում անասնաբուժութեան հետագա աճումը և արդյունավետութիւնը: Իրանից ոչեւք և հետեցնել, վոր արդյունավետ, բարձր ապրանքային անասնաբուժութիւն սակղծելու միակ ուղին—սոցիալիստական ուղին է—սովխոզներ և կոլխոզներ կազմակերպելու ուղին:

Դասակարգային թշնամին, կոնգրատականները և աջ ուղորդունիստները դանոււմ ենին, վոր անասնապահական կոլխոզների կազմակերպելն անհնարին է, վոր միակ յեղքը կուլտիպային տնտեսութիւններն են: Սակայն, կուսակցութիւնը, հակառակ այդ վայնասուններին, կարճ ժամանակում հսկայական նվաճումներ ձեռք բերեց անասնաբուժութեան սոցիալիստական վերահաստատումն ասպարիզում և տալացուցեց, վոր դարգացման միակ ուղին—անասնապահական սովխոզներ և կոլխոզներ կազմակերպելու ուղին է:

Հիրավի, միայն խորհրդային և կոլլեկտիվ տնտեսութիւնների միջոցով կարելի յէ սակղծել արդյունավետ անասնաբուժութիւն, նրանց միջոցով է հնարավոր կազմակերպել անասունների ուսցիտնայ խնամքն ու կերը և արտաների ու խտտարքների բարելավումը: Մեզ մօտ, Անգրիկովիասում, անհատական մանր, վորոյացած, ցիր ու ցան տնտեսութիւնների հետամնաց անասնաբուժութիւնը վորոքմելի արդյունքներ է ստանում, յեթե համեմատելու լինենք ուրիշ լերկրների անասունների արդյունավետութեան հետ:

Որինակ՝ գանիական մեկ կովը, տարվա ընթացքում, մտատարապետ չորս անգամ ալել կաթ է տալիս, քան Անգրիկովիասի մի կովը: Ալիւնին չեր կարելի պահանջել դարմանով կերակրվող կիսաքաղց կովից: Այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր Իանիայում մեկ գլուխ խոշոր առասունին՝ մտաւրային կերակրման շրջանում հասնում է 10—12 ցնտներ կրախմայային հիլիլիլանտ այն ժամանակ, յերբ մեզ մօտ միայն 3,5 ցնտներ է:



Գործն այս ձևով շարունակել յերբեք հնարավոր չի: Գյուղատնտեսութեան աստղարկում, անասնաբուծութեան խնդիրը մեր աշխատանքի, մեր ուշադրութեան հիմնական առանցքը պիտի կադրի:

«Յերկրորդ հնդոմայակում, անասնաբուծութեան բնողովա-սում, պետք է նվաճել հատերի ավելացում, բարձրացնելով նրա սպարանքային արտադրանքն այնպես, զոր համապատասխանի և լուծի հիմնականում անասնաբուծութեան պրոբլեմը ԽՍՀՄ-ում—ինչպես այդ հաղանատիկներն պրոբլեմի նկատմամբ կատարեց կուլակցութեանն առաջին հնդոմայակում» (17-րդ կուակոնֆերանս):

1956 թիվը պետք է և կարող է դասնել ամբողջ անասնա-պահական անտեսութեան վերելքի բեկման տարի: (17-րդ հա-մադումար, ՍՍՍՂ):

Կովկասակցութեան այդ մարտական ու կարևոր խնդիրը—սոցանասնապահութեան հետադա անուսն ու ամբացումը, մեք բոլորն ուշադրութեանն և հրավիրում սակոճնու կերի կայուն բողա, առանց վարի յերբեք հնարավոր չի լուծել սոցիալիստական անասնաբուծութեան պրոբլեմը:

Կերի խնդրին մինչև հիմա Հայաստանում հարկ յեղած ուշադրութեանը չի դարձնված:

«Թեև յով ցանովի խտերի քանակը նմանապես մի վոքը ընդարձակվեց, այնուամենայնիվ դեռ շատ հեռու յենց այն դրութեանից, յերբ կարելի կլինի անել, զոր անասունների հոտն ամբողջ ասրվա ընթացքում արգեն աստեղծված և անրածնա քանակի և վարակի խտով ու կերով: (ՀՆ(բ)Գ 9-րդ համագումար, Ա. ԽՍՀՄ):

Հանրածանոթ է այն դրութեանը, զոր դեռ ձմտան կեսին սպասվում է անտեսութեան կերի պաշարը, զոր գյուղացին տաս-նյակի կլիումները և անցնում, դեռ ու դեռ և ընկնում կեր ձևաք բերելու համար: Սակավ չեն այն դեպքերը, յերբ գյուղացիներն ստիպված են լինում ձմեռը—ձյունի սակից խտի մնացորդներ, տերևներ ու թփեր հանել անասուններին ստից աղատելու հա-մար: Այս ամենի հետևանքն այն է լինում, զոր գյուղացին դար-նանն անասուններին դուրս և բերում դոմից վորպես կենդանի զխակներ:

Գործնք են կերի ազրյուրները Հայաստանում.—Այդ նախ ընդարձակ արտաներն ու խտարքներն են, զորոնք մինչ հեղա-փոխութեանը մի խուժը կալվածատերերի և անհատական—քալ-

վորական անտեսությունների կողմից բարբարոսաբար սպառնալու հետևանքով, ուժասպառ են դարձել, կորցրել են իրենց բարձր բերքատվության վորակը, փոխել (դեպի վատը) բուսաքանակիան հազմը, շատ լիռնալանջիք իսպառ զըկվել են բուսականությունից: Մինչև հիմա շատ քիչ՝ համարյա աննկատելի տղխատանց և կատարված բնական հարուստ այդ արտաների և խոտհարքների բարելավման ասպարիզում:

Կերի յերկրորդ հիմնական աղբյուրը՝ ցանսվի խոտերն են՝

Ի՞նչպես և զըված այդ դործը մեզ մոտ՝ Հայաստանում:

1930 թ.            1931 թ.            1932 թ.            1937 թվին

բոս 2-րդ  
Տոգամյակի  
պլանի

Ցանսվի կերաբույսերի ապրածությունը . . . . .	5,500 հեկտ.	9,000 հեկտ.	20,000 հեկտ.	80,000 հեկտ.
Հայաստանի բոլոր ցան- բերի վոր 0/0-ն և կազմում	1,50/0	3,50/0	—	—

Այս թվերը ցույց են տալիս, վոր դյուրաշանտանական տեսակետից անասնապահական յերկիր Հայաստանը բաղաբարվել և կերաբույսերի տարածության 1,50/0—30/0-ով: Թվերն ասպացուցում են, վոր անասնապահության ասպրանքայնությունը Հայաստանում վորքան ցածր և յեղել և վերջապես, թի մեր ուղադրությունից վորքան դուրս և յեղել անասնապահությունը կերով ապահովելու խնդիրն առաջին հնգամյակում:

Յերկրորդ հնգամյակում անասնապահության համար կերի կայուն բազա սահղծելու դործում մեծ դեր և թաղալու խոտաքանությունը: 1937 թվին 80,000 հեկտար խոտի ցանք՝ կատարելու պլանը միանգամայն ունալ և Մենք բոլոր նախապայմաններն ու միջոցներն ունենք այդ պլանն իրագործելու համար:

Ուրեմն կերի խնդիրը լուծելու համար անհրաժեշտ և նախ՝ բարելավել բնական խոտհարքներն ու արոտաները, և յերկրորդ՝ անցնել խոտաքանության:



## ԻՆՉ ԿԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԲԻՆԻ ԽՈՅԱՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Անասնապահութեան հսկա առումը մեր տոռը դնում է երբի ապահովման խնդիրը: Բնական խոտհարքները չեն ապահովում պահանջվելիք կերի բազան: Ուրիշ յերկրներէ, մասնավորապէս Ամերիկայի, անասունների բարձր արդյունավետութեան (գաղանիքներից) մեկն էլ անասունների կերի ուղղունի խոշորագույն մասը կազմող խաւցրած և էյութալի կերն է, իսկ խաւցրած կերերի մի մասը և ամբողջ էյութալի կերը մենք կարող ենք միայն ստանալ կերարուեստը ցանելու միջոցով: Ուրեմն խոտացանութիւնը սնանութիւնն ապահովում է բազմակողմանի կերով:
2. Խոտացանութիւնը բարձրացնում է հողի բերեացւոյութիւնը. նորացնում է հողը՝ բույսերին անհրաժեշտ սննդառու նյութերով՝ ազոտով և այլն:

Ազոտ շատ կտ գոմարում և վարդ հանքային պարարտանյութերում, որինանհ՝ չիլիական սելիտրում, ցիանամիլում և այլն: Հողում, վարից բույսը սնվում է, ազոտ շատ քիչ է գտնվում: Մինչդեռ սղի խոշորագույն մասն ազոտ ևս Բայց ցամփ այն է, վեր բարբ կուլտուրական լույսերը չեն կարողանում ողտվել սղի այդ մքի հարստութեանից, բացառութեամբ Թիթեանածաղիկներից (առվույտ, վիկ, կորնդան, սոյա, լարի և այլն):

Յնոյ ահա, վերահիշյալ խոտարուեստերը, մյուս կուլտուրական բույսերին՝ ազոտ մատակարարելու գործում, սչնութեան են դալիս:

Անս ինչպէս և կատարվում այդ ամենը:

Ասվույտի, վիկի, կորնդանի արմատների վրա շտաները նկատած կլինեն պալարիկներ, վորտեղ դանվում են բաղմամբիլ բակտերիաներ, վարանք հասարակ ոչքով անասնանելի յին:

Այդ բակտերիաներն սղից վերցնում են մեծ քանակութեամբ ազոտ՝ իրեն սնունդ: Թիթեանածաղիկ բույսերը, վորտեց արմատների վրա ապրում են այդ բակտերիաները, սկսում են սնվել ազոտային լապտոթութեաններով: Ողտադարմելով սղի ազոտը, Թիթեանածաղիկ բույսերն ազոտային մասերը կուտակում են իրենց

տերևներում, ցողուններում, արմատներում և այլն: Բույսերը հա-  
վաքելուց հետո, յերբ հողը վարում ենք, տերևներէ, ցողունների  
ու արմատների մնացորդները մնում են հողում ու քայքայվելով,  
դառնում են սըմնիչիլ սնունդ հաջորդող բույսերի համար, բարձ-  
րացնելով նրանց բերքը:

3. Հացահատիկային բույսերը և ուրիշ շատ բույսեր դարձաց-  
նում են կրկնց արմատային ցանցը միայն հողի վերին շերտում  
և յերկաբ տարիներ ուղաադործելով այդ շերտը, ուժասպառ են  
դարձնում հողի այդ մասերը: Սակայն կերտբույսերից առվայթը յե-  
կորնգամը՝ սմարնիլ խորը գմացույ արմատների, սմվում են հողի մեր-  
կին շերտից, վորից յնմ ոգսվում մյուս բույսեր:

4. Մեր դաշտերը շատ են վարակված մուլխոտանքով, վորումք  
հանդիսանում են ցածր բերք ստանալու պատճառներից մեկը:  
պայքարը մուլխոտների դեմ կարելի չի տարբեր տեսակ կազմակեր-  
պել. որինակ՝ ցելերի համ շարքահերկ կուլտուրաների միջոցով:  
Մուլխոտների դեմ պայքարելու միջոցներից մեկն էլ խոտացանութումն է:  
Առվայտից և կարնդանից հետո դաշտը մաքուր և լինում մուլ-  
խոտներից:

5. Խոտացանութումը հնարավորություն է տալիս պարտալ՝ խտմ  
չքաղելու հարկեր: Մեր յերկրագործական սակավաշուր շրջաններ-  
ում հազամասերը վորոշ տարիներից հետո թողնվում են վորպես  
ցել՝ խոնավութումն կուտակելու և այլ նպատակներ պայմաններ  
ստեղծելու համար: Կորպեսզի այդ տարին ցելահողամասի բերքից  
չդրկվեն, նույն հողում ցանում են մի վորեն խոտաբույս, որինակ  
վիկ, վորը տալիս է առատ խոտ և բարձրացնում և հողի բերքա-  
տվութունը:

6. Յանելով կերաբույսեր, այն են՝ արմատաաղաղանքներ, սիլո-  
աբույսեր և խոտաբույսեր, հնարավորութումն ենք տալիս աղն-  
տեսութումն ստեղծելու աշխատանքների պլանային դասավո-  
րում, վորովհետև սրանց ցանքը, խոտմքը, հավաքը և այլն, չի  
դուզադիպում հացահատիկներին և թույլ և տալիս քիչ բանվորա-  
կան ուժով շատ աշխատանք կատարել:

7. Խոտացանութումը հնարավորություն է տալիս ոգսագործել  
բարբարոս յեւ չոր հարկեր, վորտեղ ուրիշ բույսեր յնմ կարողանում  
զարգանալ:

8. Յերաշար, չոր յերկրագործական շրջաններում, բավակա-  
նին մեծ քանակութումը բերք է խում մեղանից. դեպքեր են

իմում, յերբ յերաշտի շնորհիվ չի ստացվում նույնիսկ ցանած  
սերմը: Սերտս վ դեմ պայտանիս միշտցներից մեկը խոտացամու-  
րուցն է:

Ծ. Այսպիսով, խոտացամուրյան միշտցով, նպաստում ենք անաս-  
նապահության պրոբլեմի լուծմանը, սեղծելով ամուր կերի բազա,  
դրա նեւ միասին լուծում ենք բերեացվության բարձրացման պրոբլեմը:

## Ա Ր Վ Ք Ի Յ Տ

Ասվույթը շատ հին բույս է Գարսիաստանը, վորը հանդի-  
սանում է առվույթի հայրենիքը, դեռ 2000 տարի-առաջ (մինչ  
մեր տարեդրությունը) մշակել է այդ կուլտուրան: Այն ժամանակ  
Պարսկաստանում և Փոքր Ասիայում մշակում էին բացառապես  
վորպես ձիու կեր: Զիարուծությունը՝ կազմված պատերազմական  
հաճախակի դործողությունների հետ, բաղակազմին դարձացած էր:  
Հույն-պարսկական պատերազմի շնորհիվ, առվույթը Պարսկաստա-  
նից Հունաստան է անցնում 470 թվին: ապա 16-րդ դարում նոր միայն  
սկսում է տարածվել յեվրոպական պետություններում, վորտեղից  
էլ մուտք է դործում Ռուսաստան թե վաղճուց է արդյոք ինչ մը-  
շակվում է առվույթը մեզ մոտ՝ Անդրկովկասում և մասնավորա-  
պես Հայաստանում—դժվար է ասել: սակայն առվույթի վայրի  
անտառները, վորոնք տարածված են մեզ մոտ՝ սկսած քամրակա-  
ցան շրջաններից մինչև լեռնային շրջանները, գալիս են աղա-  
ցուցելու, վոր Հայաստանում շատ վաղուց է, ինչ մշակվում է  
և առվույթը և թերևս նրա հայրենիքն է հանդիսանում Պարսկաս-  
տանի հետ միասին:

Ասվույթը բազմամյա բույս է, միևնույն հաղամասում մնում  
և բերք է տալիս 8—15 տարի Նայած տնտեսության թեքմանը  
և հողային ու կլիմայական սայմաններին, կորոզ է մնալ միևնույն  
տեղում նույնիսկ մինչև 20 տարի:

Լայ վարձացած առվույթի թուփն ունի 20—25 կանգուն  
ցողուն, 0,5 մինչև 1,0 մետր բարձրությամբ Յուզունները պատած  
են լինում մազմզուկներով, բայց կան անտառներ ևս, վորոնք բո-  
լորովին մերկ են: Տերևները յեռակի յեն, յերկարավուն, հաճախ  
ձգված և շատ խիտ դասադրված: Ծաղիկները մանրակաղաղույն  
և դեղնազույն են, վաղկույզաձև գասավորված ծաղկափթթում թյուն  
են կազմում: Պտուղն առվույթի պատիչ կամ ունդ է վորբաձև  
կամ մանգաղանման, վորտեղ տեղավորված են մի քանի հաս-  
մանը յերիկամուռաձև սերմեր:

Ստվույտը հայտնի չէ իր շատ խորը Թափանցող արմատներով. սովորաբար սրանց յնդկարությունը 1,5—2 մետր է, սակայն հետազոտությունները ցույց են տալիս. զոր արմատները յնդկարությունը հաճախ հասնում են 7,5—13 մետրի, նույնիսկ 20 մետրի։ Ունի հիմնական մեկ, համեմատաբար հասա արմատ, վորից տարածվում են դեպի 2 կողմերը բարակ արմատիկներ, վորնք դարձյալ ուղղված են դեպի ներքև։ Արմատների յնդկարությունը և խորությունը կախված են հողի տեսակից. յիբրուն հողերում շատ խորն է դնում. այն հողերում, ուր ստորերկրյա ջուրն ավելի բարձր է, արմատները խոր չեն դնում։ Բացի արմատիկների լսիտ ցանցից, սովույտն ունի արմատային հանդուցից, վորը դանվում են հողի վերին շերտում։ Արմատային հանդուցից և, վորը դարդանում են նոր ցողունները։ Յուրաքանչյուր քաղից հետո, ցողունները մահանում են և արմատային հանդուցիցից դուրս են գալիս նոր ցողուններ։

Աստվույտի շատ տեսակներ կան, վորոնք հայտնի չեն խոտապանության մեջ. սրինակի ֆրանսիական, Թուրքեստանի և այլն. գրանցից մեղ մոտ կա ու լավ բերք է տալիս սովորական մանրակազույն ծաղիկներով սովույտը, վորը կարող է և՛ ֆրանսիական ծաղում ունենալ և՛ Թուրքեստանիս լճահանրապետ մեղ մոտ մեծ տեղ պետք է տալ Թուրքեստանի սովույտին, վորի ծաղման վայրը, այսպես թե այնպես, նմանվում է Հայաստանի պայմաններին։ Բավական շատ են վայրի սովույտի տեսակները մեր արտաներում ու մարդագետիներում։ Հատկապես դեղին ծաղկով սովույտը միանգամայն հարմար է մեր սպիտակիկ պայմաններին — ցրտին, յերաշախն և հողային պայմաններին։ Ուստի անհրժեշտ է ուղղորտություն դարձնել բաղմացնելու և լավացնելու այդ տեսակները։

Հայաստանում սովույտը տարածված է ու խոտապանության մեջ հայտնի չէ դաշտավայրերից սկսած մինչև նախալեռնային ունու չնխի լեռնային շրջաններում՝ ջրովի պայմաններում։ Զնայած գրահանության մեջ ընդունված է, վոր սովույտի շրջանները դադարդիտում են խողովի դարդացման շրջաններին, սակայն մենք տեսնասան ենք Փաշալվի, Բասարզեզարի, Ասարանի և այլ լեռնային շրջանների սովույտի ցանքերին։

Լեռնային շրջաններում, ճիշտ է, սովորական սովույտն այն բերքը չի տալիս, ինչ՝ դաշտավայրերում, սակայն այդ շրջանների կլիմայական պայմաններին համապատասխանող սովույտի տես-



տակները կարող են մեծ բերք տալ. որինակ՝ դեղին կամ շվեդական առվույտը. այս տեսակը կա Անդրկովկասում, մեզ մոտ՝ Հայաստանում, վայելի դրուժյան մեջ:

Այդ առվույտն արժանի չե ուշագրության այն շրջանների հասար, վորտեղ սովորական առվույտը՝ կլիմայական պայմանների շնորհիվ, հնարավոր չի լինում ցանել կամ թե բերք չի տալիս:

Դեղին առվույտը չափից դուրս յերաշարին ու ցրտին դիմացող բույս է. դիմանում է ամենատեղին, չոր սառնամանիքներին, քայց տալիս է ավելի պակաս բերք: Մյուս կողմից, դիմանում է ամառային տաք յերանակներին, Շնորհիվ իր խորաթափանց արմատների, շատ յերկար է դիմանում յերաշարին:

Հաղի առնելով դեղին առվույտի այդ յերկու հատկությունները, միանգամայն հնարավոր է այն տարածել մեզ ընծային և սակավաշուր գաշային շրջաններում. որինակ՝ Բասարզեզարում, Մարտունիում, Աղբաբայում, և այլն:

Մյուս խոտաբույսերի համեմատությամբ դեզին առվույտը տալիս է շատ բարձր վորակի կանաչ ու չոր կեր: Հայաստանում ծշահվող առվույտի տեսակներն աչքի յեն ընկնում իրենց ցրտադիմացկունությամբ, տալիս են առատ բերք: Դաշտավայրերում հնձվում է Զ—Ց անգամ, նախալեռնային շրջաններում Զ—Յ անգամ: Ամերիկայում առվույտն ուղտադործում են նաև սիլասի համար, բարձրացնելով նրա վորակը Բացի այդ, այնտեղ առվույտի խոտից պարաստում են ալյուր, դրանով շիտի ձևով կերակրում են հորթերին, խոզերին, այլև մեծ քանակությամբ ուղտադործում են թռչնաբուծական տնտեսություններում:

Առվույտը հողի նկատմամբ պանամջկոս չե, լավ բեր է տալիս ամեն տեսակի հողերում, չի սիրում սառ խամայ (գիմո) յեղ քուրսուս հողեր:

Առվույտը լավ է դարգանում տաք կլիմայական պայմաններում. ծովափնյա յերանակները, անձրևները, մառախուղներն առվույտի վրա վրտ են անդրադառնում:

Առվույտի արմատները վրա գտնվում են պարբրիկներ, վորտեղ ապրում են բազմաթիվ բակտերիաներ. այդ բակտերիաների շնորհիվ առվույտը հարստացնում է հողն աղտոտի:

Առվույտից հետո, բոլոր բույսեր մեծ բեր է տալիս. հետվաթիս առվույտը հիանալի նախորդող բույս է:



Գյուղատնտեսական փորձը ցույց է տալիս, վեր միևնույն կուլտուրան ասէն տարի միևնույն տեղում ցանկըմ, տարեց տարի դոցում և այլաչ կուլտուրայի բերքը: Գյուղացին իր տանայակ տարիներէ փորձից յիշնելով՝ միշտ սահմանում և կուլտուրաներէ փորոշ հաջորդակա՛նութեան:

Գյուղատնտեսութեան մասնագիտացումը, վորը հանդիսանում և պլանային տնտեսութեան հիմնական խնդիրներից մէկը, պահանջում և ստանձին մասնագիտացած շրջաններից ու տնտեսութեաններից՝ հողային տարածութեանների ամնւախօսքո՛ր մասը հասկացնել առաջավոր կուլտուրային. որինակ՝ հացահատիկային շրջաններում կամ տնտեսութեաններում—հացահատիկներին, բամբակացան շրջանում կամ տնտեսութեանում ամնախօշոր մասը—բամբակին:

Այդ պահանջն անշուշտ պետք և կապել վորոշ հաջորդակա՛նութեան հետ. որինակ՝ բամբակի կուլտուրան 4—5 տարուց հետո ցանքաշրջանա՛տութեան կարգով պետք և տեղի տա ամուլային և այլն:

Ցանքաշրջանա՛տութեան ընթացքում հնարավորութեան և ստեղծվում լրիվ ոգտադրմնէ հողի բոլոր ընդունակութեանները—բարձր բերք ստանալու համար: Բոլոր բույսերն իրենց աճման համար պահանջում են լույս, ջրմութեան, խոնավութեան, ող և սննդարար նյութեր, սակայն տարբեր քանակութեամբ, տարբեր ձևերով ու տարբեր ժամանակում:

Որինակ՝ խոնավութեան նկատմամբ բոլոր բույսերը տարբեր պահանջ են ներկայացնում, հետևապէս՝ շատ խոնավութեան պահանջող բույսը պետք և հաջորդի քիչ խոնավութեան պահանջող բույսին: Կամ թէ տարբեր բույսեր, հողի տարբեր շերտերից են ստանում խոնավութեան, որինակ՝ հացադդինների արմատները գանվում են միայն հողի վերին շերտում, հետևապէս սգովում են վերին շերտից, մինչդեռ ամուլայի արմատները յերբեմն թափանցում են հողի մէջ նույնիսկ 15 մետր խորութեամբ և սգովում են բոլորովին այլ շերտից:

Տարբեր բույսերն իրենց բերքի հետ տարբեր քանակութեամբ սննդարար նյութեր են տանում հողից (ազոտ, կալի, ֆոսֆոր և այլն). որինակ՝ շաքարի ճակնդեղը, կերարույսերը և դեղատու բույսերը՝ 2—3 անգամ ավելի կալի յեն վերցնում հողից, քան հացահատիկները:

Տարբեր բույսեր տարբեր ձևով են ազդում հողի ֆիզիկական կառուցվածքի վրա: Եսա բույսեր խախտում են հողի կառուցվածքը, փաշխացնում հողը, խախտում են ջրային և սդային փոխանակութունները: Սաղայն կան բույսեր, որինսակ՝ կերարույսերը, վորոնք, ընդհակառակը՝ վերականգնում են հողի կնձկտայն կառուցվածքը և դրանով լավացնում են նրա ֆիզիկական կառուցվածքները:

Բոլոր բույսերն ազգատացնում են հողը սննդարար նյութերից: Խնկ թիթեոնածաղիկ բույսերը, վորոնց մեջ մտնում են նաև առվույտը, վիկը, կարնգանը, յերեքնուկը, ընդհակառակը՝ հողը հարստացնում են ազոտով, որի անսպառ աղբյուրի հաշվին:

Վերջապես, հողում յեղած մոլախոտերի դեմ պայքարելու գործում, տարբեր բույսերի դերը տարբեր է: շարքահերկ բույսերը, շնորհիվ միջնաբային մշակութուն, իսպառ վոչնչացնում են մոլախոտերը: Մոլախոտերի դեմ պայքարելու գործում մեծ դեր են խաղում նաև արադ ու խիտ աճող բույսերը, վորոնք խեղդում, փչացնում են մոլախոտերին, որինսակ՝ կերարույսերը:

Հետևապես մոլախոտերի դեմ ախտիվ պայքարող բույսերը պետք է ցանել պասսիվ պայքարողներից հետո և ընդհակառակը:

Ցանքաշրջանառութունն ախտիվ պայքար է մղում ֆեոսատունների և սնկային հիվանդութունների դեմ, վորովհետև միևնույն տեղում մի վորևե բույսի յերկար մշակման հետևանքով բողմանում ու զարդանում են այդ բույսի ֆեոսատունները, վորոնք բոլորովին ֆեոս չեն հասցնում հաջորդ բույսին, այլ ընդհակառակը՝ փչանում են:

Մեծ է ցանքաշրջանառութուն մեջ առվույտի դերը: Առվույտն ունի շատ յերկար արմատներ, վորոնք թափանցելով հողի խոր յերտերը, ննալով տյնտեղ—իտում ու հարստացնում են հողն որպանական նյութերով:

Արմատների խիտ ցանցի միջոցով առվույտը փերացնում է հողը:

Ամենակարևորը, վորի մասին կանդ առանք առաջ, հողը հարստացնելն է: Ուրեմն առվույտը հողը փերացնում է, հարըստացնում է որդանական նյութերով և ազոտով, հետևապես իր այդ հատկութուններով նա անպետք հողերը դարձնում է պիտանի: Մեծ է այդ հատկութունն դերը բամբակացան շրջաններում: Բամբակի անկախութուն խնդիրը մեղանից պահանջում է ընդարձակել նրա տարածութունը: Հայտնի յե, վոր բամբակացան շրջան-

ներում կան հողի հսկայական պիտանի տարածութիւններ, զորոնք բոլորովին պիտանի չեն բամբակի համար: Ահա այստեղ է, զոր առկույտի ցանքաշրջանառութիւնն ողնութեան և դաշխ և այդ անպետք հողերը դարձնում և բամբակի համար միանգամայն պիտանի հողեր, զորոնք առկույտից հետո, բարձրացնում են բամբակի բերքատուութիւնը: Առկույտի գերը բամբակացան շրջաններում խոշոր և նաև կերի տեսակեայց: Այդ շրջանների անտանապահութեան կերի բազան հանդիսանալու յն առկույտը:

Գիտենք, զոր այդ շրջաններում առկույտն ամենից շատ եփեկա և ալոյիս, հեռեապես, վերադասի միանգամայն ապահովենք այդ շրջանների սպառողական անտանապահութեան և անտեսութեան մեջ մեծ գեր խաղացող կենդանի քաշող ուժի կերի խնդիրը, պետք և ցանկենք առկույտ ցանքաշրջանառութեան սահմանած շրջանակներում, յիշենլով նրանից, վոր բամբակն այդ օրջաններում գերիխող կուլտուրան է:

Բամբակացան շրջանները հանդիսանալու յեն նաև առկույտի սերմարումարան, զորովհետև նա մեծ բերք և տալիս միայն բամբակացան շրջաններում: Որինակ՝ հայտնի յն Սարգսբարազի, Նոր-Արմալիի կոլխոզների առկույտի սերմաղաշանքը, զորոնք տեսլին քանակութեամբ սերմ են արտադրում: Այս բոլորը հարկադրում և մեզ բամբակացան շրջաններում ցանքաշրջանառութեան մեջ մտցնել առկույտը հետևյալ նպատակով:

1. Ընդարձակել բամբակի տարածութիւնն ի հաշիվ անպետք հողերի:

2. Ապահովել այդ շրջաններում կենդանի քաշող ուժի և անտանապահութեան կերի բազան:

3. Զարգացնել առկույտի սերմարումութիւնը, զորի կարիքըն որ սրի վրա ահում են:

Առկույտի ցանքաշրջանառութեան խնդիրը հացահատիկային և անտանապահական անտեսութիւններում ավելի հեշտ և լուծել. այստեղ մեծ գեր և խաղում կերի բազան, անտեսանները քանակը, տեսակը և այլն:

## ԱՌՎՈՒՅՏԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վարքան ևլ առկույտի համար կլլիմայական, հողային և այլ պայմանները նշատաավոր լինեն, յիժն հողը լավ նախապատրաստված չն, բոլորովին այն յեկամաւոր չենք ստանա, ինչ սպասում ենք:

Ասփուլյան այն բուլսերից և, վոր մեծ պահանջ և ներկայաց-  
նուով հողի հանդէսը՝ մշակման, մասնավորապէս նախապատրաստ-  
ման. սակայն և այն բուլսերից մեկն և, վորը կրկնակի անդամ  
արգարացնուով և իր վրա դրված բոլոր աշխատանքները՝ Վճրն և  
առփուլյան հողի լավ նախապատրաստուով. այդ՝ մուխտտերից  
ազատելն և, հողն այն դրուլթյան հասցնել, վոր ապահովվի առ-  
վույտի միահապասար ձելլը և ընդհանրապէս ստեղծվեն այն մաք-  
սիմով նպաստավոր պայմանները, վորոնք անհրաժեշտ են ավայ  
բուլսի զարգացման համար:

Առաջին տարին առփուլյաը շատ թույլ բույս և և շատ զգա-  
յուն մուխտտերի հանդէսը: Այդ իսկ պատճառով, առաջին և հիմ-  
նական պայմանն և՛ դաշար մուխտտերից ազատել, մասնավանդ  
կոճարմատավոր մուխտտերից, որինակ՝ չայլրը, դանդուրպանը  
և այլն:

Յերկրորդ նախապայմանը՝ ցանելու մասնետին հողում բա-  
ժականաչափ խոնավութուն պիտի լինի, վորն անհրաժեշտ և  
առփուլյան սկզբնական աճման համար: Քիչ խոնավութուն լինե-  
լու դեպքում, մուխտտերը, վորոնք այնքան ել պահանջկոտ չեն  
խոնավության և ընդհանրապէս ավելի լավ են հարմարվել մեր  
պայմաններին, սկսում են արագ աճել ու նույնիսկ խեղդել առ-  
վույտին:

Մեծ նշանակութուն ունի առփուլյան համար նախորդ բույ-  
սը. առփուլյաը սովորաբար լավ և զուգում իրեն շարքաներկերից  
հետո, որինակ՝ բամբակ, ճակնդեղ, կարտոֆիլ, սիլոսային բուլսեր  
և այլն: Այդ բացատրվում և նրանով, վոր ընդհանրապէս շարքա-  
ներկերից հետո, միջշարքային մշակության շնորհիվ, հողը մաքուր  
և լինում մուխտտերից:

Հողը տեսք և վարվի աշնանը, իսկ յեթե նախորդող բույ-  
սը հացահատիկ և, այդ դեպքում հովաքելուց անմիջապէս  
հետո:

Վարը պետք և կատարել խորը՝ 20—25 սանտիմետր, վորով  
հնարավորութուն կատեղծվի վերականգնել հողի անբացիտն:  
Մթնոլորտային տեղումներն այդ դեպքում ավելի արագ են ձը-  
մում, քան յերև վարի ժամանակ: Խոր վարը հնարավորութուն  
և ապիս առփուլյան առաջին տարվա թույլ արժատներին ավելի  
խոր դնալու:

Թուլաստանի Բիզնէշուկի փորձադաշտի ավայններն ապա-  
ցուցում են, վոր խոր՝ 25 սանտ. վարի դեպքում, առփուլյան բեր-  
քըն ավելանում և:

# ՎԱՐԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

10 սմ. 15 սմ. 20 սմ. 25 սմ.

Մեկ տարվա ստացած միջին

բերքը (կիլոգրամով)

1616

1712

1776

1888

Աշնանը խոր վարելուց հետո, հողը թողնվում և այդ գրության մեջ մինչև դարձուհի Գարնանը, առաջին իսկ հնարավորության դեպքում, յեթև ձևերը հողը նստել և, անհրաժեշտ և կուլտիվատորով կամ 4 խոփանիով կրկնավարել, իսկ յեթև վոչ, բազականանալ դեղզազով փոցխելով:

## ՀՈՂԻ ՆԱԽՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Գատանում են դեպքեր, յերբ աշնանը հնարավոր չի լինում հողը վարել, այդ դեպքում պետք և հողը վարել գարնանը, սակայն դրանից բնդհանրապես պետք և խույս տալ, վորովհետև յերբևք այն բերքը չի ստացվում, ինչ ստացվում և աշնան վարել դեպքում:


Հողի յերևը պետք և լինի հարթ ու հավասար, առանց կոշտերի, իսկ մյուս կողմից՝ պետք և լինի փխրուն, վորպեսզի առփույթի նուրբ արմատները կարողանան սկզբնական շրջանում խորը թափանցել հողի մեջ:

## ԴԱՄՏԸ ՊԱՐԱՐՏԱԹՆԵԼԸ

Վորպեսզի առվույտն իր դոյության ընթացքում ավելի շատ բերք տա, անհրաժեշտ և, վոր առաջին տարին հողը հարուստ լինի սննդաբար նյութերով, իսկ այդ մեք կարող ենք կատարել դանազան պարարտանյութեր հողը մացնելով որինակ, գոմաղք հանքային պարարտանյութ և այլն: Տնտեսական տեսակետից ձեռնառ յե դոմաղք վորպես պարարտանյութ մացնել հողը վոչ թե առվույտը ցանելու տարում, այլ մեկ տարի առաջ, այդ դեպքում, մեկ տնգամ պարարտանյութ մացնելով, յերկու բերք և վերցվում: Այդ հնարավոր և այժմ մեր պլանային տնտեսությաններում կատարել ահա ինչպես. առաջին տարին դոմաղքով պարարտացնելուց հետո, դաշտում ցանվում են արմատապտուղներ, որինակ՝ կերի ճակնդեղ, կամ թե չե կարասֆիլ:

Առաջին տարին արմատապտուղները կամ կարտոֆիլն ոգավում են հողը մացված դոմաղքից և նոր յերկրորդ տարում՝ ցա-

18793  
2203





նում ենք այդ հողում առվույտը: Այսպես նպատակահարմար և ձեռնտու յե, վորովհետև առաջին տարում արմատապտուղների միջնաբլային մշակման շնորհիվ վոչնչացնում ենք գոմաղբի հետ մացված մոլախոտերը:

Բացի գոմաղբից, կարելի յե հողը պարարտացնել նաև հանքային պարարտանյութերով, որինակ՝ սուպերֆոսֆատով, վորից առվույտը մեծ բերք ե տալիս: Վերցվում ե 2—3 ցենտներ, սուպերֆոսֆատ և գարնանը շաղ ե արվում ցանքից առաջ:

Թուրքեստանում պարարտացման մի շարք փորձեր տվել են հետևյալ արդյունքները

	Զպարարտացված	Պարարտացված սուպերֆոսֆատով	Պարարտացված գոմաղբով
Բերքի քանակը 1 հեկտ. (3 քաղը միասին)	29,6 ցենտ.	101,3 ցենտ.	112,5 ցենտ.

## ՎՈՐՔԱՆ ՍԵՐՍ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՆ

1 կիլոգրամը պարունակում ե 485,000 հատ առվույտի սերմ: Յեթե 1 կիլո ցանելու լինենք 1 հեկտարին, ապա յուրաքանչյուր քառակուսի մետրին ընկնում ե 50 հատ սերմ: Լավ ցանված առվույտի դաշտում 1 քառակուսի մետրում հաշվում ե առաջին տարին 200 հատ բույս, իսկ վերջին տարիներում 100 հատ: Այս հանգամանքը ցույց ե տալիս, վոր միշտ պետք ե խնայողաբար վարվել այդ թանկարժեք սերմի հետ: Սովորաբար 1 հեկտարի սերմի քանակը կախված ե սերմի վորակից, նրա ծլունակությունից, Սերմը պետք ե ունենա 85 տոկոսից վոչ պակաս ծլունակություն, այսինքն 100 սերմից 85-ը պիտանի լինեն ծլելու: Դրա համար ել անձանոթ սերմ չպետք ե ցանել, սերմի նմուշը պետք ե ուղարկել սերմը քննող կայանն ստուգման, վորի քննության արդյունքից միայն հետո ցանել:

Առվույտի նոր թարմ սերմը դեղին շաղանակազույն ե, իսկ հին սերմը՝ մուգ շագանակազույն:

1 հեկտարի սերմի քանակը կախված ե նաև կլիմայական և հողային պայմաններից, վերջուպես քանակը կախված ե նաև այն բանից, թե ինչ նպատակով և ցանվում առվույտը՝ սերմ, թե խոտ



ստանալու համար Սերմ ստանալու գեպքում քիչ պետք է ցանկել, վորպէսզի ցանքը նոսր լինի, խոտ ստանալու համար՝ շատ Սովորաբար մեկ հեկտարում պետք է ցանկել 10—15 կիլո

## ՅԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Առվույտի ցանքի ժամանակը կախված է կլիմայական և հողային պայմաններից: Սերմերը ծլելու համար առվույտը պահանջում է և՛ խոնավութուն և՛ ջերմութուն, հետևապէս շատ վաղ չպետք է ցանկել և վոչ ել շատ ուշ: Անհրաժեշտ է հողում լինի և՛ խոնավութուն և՛ ջերմութուն: Ավաղային հողերը շուտ են տաքանում, շուտ ել կորցնում են խոնավութունը, նման հողերում շուտ պիտի ցանկել, կազով հարուստ հողերը խոնավութունն ուշ են կորցնում, ուշ ել տաքանում են՝ անհրաժեշտ է նման հողերում ուշ ցանկել:

Առվույտը կարելի յի ցանկել և՛ աշնանը և՛ դարնանը: Փորձերը ցույց են տալիս, վոր դարնան ցանքերը միշտ ել ալիւի հաջող են լինում, քան աշնանը, մանավանդ յիթե՝ ձմեռը շատ խիտա է լինում:

Սակայն այնտեղ, ուր հնարավոր է՝ այսինքն ձմեռը խիտ չի լինում և ցանքի փչանալու վտանգ չկա, կարելի յի ցանկել աշնանը, այդ գեպքում պետք է աշխատել շուտ ցանկել, վորպէսզի մինչև տոպիկ սառնամանիքները բույսը կարողանա ամրապնդվել: Դարնան ցանքի գեպքում՝ դաշտավայրերում և նախալեռնային շրջաններում ցանքը կատարվում է մարտի վերջին կամ ապրիլի սկզբին, իսկ լեռնային շրջաններում՝ համեմատաբար ալիւի ուշ:

## ԱՌՎՈՒՅՏԸ ՅԱՆԵԼ ՇԱՐՔԱՑԱՆՈՎ

Մեկ մտտ առվույտն անցյալում և համարյա այժմ ել ցանվել և ցանվում է շողացան, մինչդեռ մյուս յերկրներում, վաղուց արդեն առվույտը ցանվում է շարքացանով: Շողացանով և ցանվել մինչև հիմա, վորովհետև մանր, փոշիացած անհատական տրնտեսութուններում աշխատանքը մեկնացացնել հնարավոր չի: Այժմ պայմանները փոխված են. սովխողներն ու կոլխողները և սրանց սժանդակութամբ մենաանտեսները, պետք է վերջ տան շողացանին:

Շարքացանով ցանկելիս առվույտի ընդը բարձրանում է, վորովհետև հնարավորութուն է ստեղծվում զարծադրելու այն բո-

լոր ազրոձեռնարկումները, վորը պահանջում է առվույտի կուլ-տուրան և կերևում ասացինք, վոր առվույտը չափից դուրս լույս սիրող բույս է. շարքացանը հնարավորութունն է առլիս առվույտին ոգտադործելու արևի առատ լույսը: Բույսերն ավելի հավասար է միտժամանակ են դարգանում: Շարքացանը հնարավորութունն է ստեղծում մոլախոտի դեմ մղվող պայքարը մեքենայացման յենթարկել, մշակելով միջարքային տարածութունները՝ Շարքացանի միջոցով, միջարքային տարածութունների փխրացումով, հնարավորութունն է ստեղծվում ռացիոնալ կերպով ոգտադործելու հողում յեղած խոնավության պաշարը:

Վերջապես կան մի շարք սնկային հիվանդութուններ, վորոնցից առվույտը շատ է տուժում, մանավանդ խոնավ շրջաններում: Այդ սնկային հիվանդութունների դեմ մասամբ պայքարի միջոց է հանդիսանում շարքացան ցանքը, վորովհետև այդ դեպքում բույսերը ավելի շատ ոգ է լույս են ստանում, իսկ այս հանդամանքն այնքան էլ նոպաստավոր չէ սնկային հիվանդութունների զարգացման համար: Ահա ինչու շարքացան առվույտն ավելի բարձր բերք է առլիս քան շաղացանը:

Չնայած կան հատուկ կերարույսեր ցանող շարքացաններ, բայց մեղ մոտ ցանվում է միայն ամենքին հայտնի հացահատիկների «Ունիվերսալ» շարքացանով:

Առվույտի բերքի վորակը կախված է նրանից, թե ցանքի շարքն իրարից ինչ հեռավորության վրա յե դրնվում. սովորաբար ցանում են 10—50 սմ. հեռավորությամբ: Վորքան շարքերն իրարից հեռու յեն, ի հարկե 50 սմ. վոչավելի, այնքան մեկ հեկտարից ստացած բերքն ավելի յե լինում: Սակայն փորձերը ցույց են առլիս, վոր 10 սմ. հեռավորությամբ շարքերի առվույտի բերքն ավելի պիտանի յե, քան լայն շարքերից ստացած բերքը:

Ուկրայնայի Կերի Ինստիտուտի մեխանիկական անալիզը—

**ԽՈՏԻ ՔԱՇԸ ՏՈԿՈՍՈՎ.**

Ցանքի ձևը	Տերերը	Ցողունները		
		Մանր	Միջակ	Կուպիտ
Նեղ շարքերով 10 սմ.	58,9	64,4	30,3	3,9
Լայն շարք. 50 սմ.	53,4	29,2	34,7	34,8
Ավելի լայն 70 սմ.	57,2	19,4	37,6	40,6

Այսպիսով տեսնում ենք, վոր լայն շարքերով ցանքից ստացած ասվույտի խոտն ալիւրի կոպիտ և, հետևապէս խոտի վորակը ցած: Չեսնառու չև նման խոտով կերակրել ժառղաշներին՝ ձիերին ու խոզերին:

Բացի այն, վոր ստացված խոտը կոպիտ և լինում, այլև շուտ պատկելու հետևանքով կեղտոտված:

Էյն շարքերով ասվույտի ցանքը ձմեռն ալիւրի շուտ և յենթարկելում ցրտահարութեան, քան թե նեղ շարքերով ցանքը: Այս բոլորից պետք և յեղրակացնել, վոր խոտի համար նպատակահարմար և ցանքը կատարել շարքը շարքից 10 սմ. հեռավորութեամբ:

## ՇԱՐՔԱՑԱՆԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

Ասվույտը կարելի չև ցանել բոլոր այն շարքացաններով, վորոնցով ցանվում են հացահատիկները: Այդ շարքացանը նույն հացահատիկամբ ցանում և և ասվույտի սերմերը, յերբ կանոնավորվում և շարքացանը, այսինքն այնպես և արվում, վոր ցանկացած ու անհրաժեշտ քանակութեամբ ասվույտի սերմ թափվի:

Յենթապէս պիտի ցանենք 1 հեկտարին 20 կիլո ասվույտի սերմ: Շատերը հաճախ աչքի չափով են կանոնավորում մեքենան Այդ միանշանայն սխալ և Ինկատի պետք և ունենալ ասվույտի սերմի մանր լինելը, հակառակ դեպքում կարող և պատահել, վոր ցանվի մի քանի անգամ ալիւրի խիտ, վորը ցանկալի չև:

## ԻՆՋՊԵՍ ՊԻՏԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ ՇԱՐՔԱՑԱՆԸ

1. Պետք և խոտնալ շարքացանի լայնութեանը 11 փոդանի շարքացանի լայնութեանը 143 սմ. և.

2. Չափում ենք շարքացանի անիվի շրջագիծը, վորը սովորաբար հաշտար և լինում 4 մետրի.

3. Իմանալով շարքացանի լայնութեանը և անիվի շրջագիծը, հեշտութեամբ կարող ենք իմանալ, թե ինչպիսի տարածութեան կցանի շարքացանն անիվը մեկ անգամ պտտվելիս:

$$143 \text{ սմ.} \times 4 \text{ մ.} = 5,7 \text{ քառ. մետրի.}$$

4. Դրանից հետո վորոշում ենք, թե մեկ հեկտար ցանելիս շարքացանի անիվը քանի անգամ և պտտվում: Այդ վորոշելու

համար 1 հեկտարը (10.000 քառ. մետր) բաժանում ենք անի-  
վը մեկ անգամ պտտելու դեպքում ցանված տարածության վրա՝

$$10,000 : 5,7 = 1786 \text{ անգամ.}$$

այսինքն՝ շարքացանի անիվը 1786 անգամ պտտվելիս կցանվի  
ամբողջ 2 հեկտարը:

5. Այժմ պետք է իմանալ, թե ցանկացած խտությամբ ցա-  
նելիս, այսինքն 20 կիլոգրամ, յուրաքանչյուր անիվի մեկ պտույ-  
տին վորքան սերմ կցանվի. դրա համար 20 կիլոգրամը պետք է  
բաժանենք 1786 պտույտի վրա,

$$20 \text{ կ. } : 1786 = 11 \text{ գրամ.},$$

6. Սակայն կանոնավորելու դեպքում նպատակահարմար է  
վերցնել վոչ թե մեկ անգամ պտույտի ժամանակ թափված սեր-  
մի քանակը, այլ 50 պտույտի, այսինքն՝  $50 \times 11$  գրամ = 550  
գրամ.

7. Ուրիմն շարքացանն այնպես պետք է կանոնավորել, վոր  
50 պտույտի դեպքում ցանի 550 գրամ սերմ.

8. Այս հաշիվները կատարելուց հետո, ստուգում ենք շար-  
քացանի մասերը. հետո բարձրացնում ենք պտտվող մեխա-  
նիզմի կողմից անիվը և դնում այնպիսի հենարանի վրա, վոր  
պտտվելիս չշփվի հողի հետ.

9. Կանոնավորելի միջոցով փոքրացնում ենք սերմ թափող  
անցքերը. չափում ենք միլիմետրով այդ անցքի լայնությունն  
ու գրում մի վորևե տեղի Փոում ենք շարքացանի տակ՝ բրդենտ  
կամ շոր, պտտվող անիվին կապում ենք թիլի կամ շորի կտոր:  
հաշվելը հեշտացնելու համար:

10. Այդ բոլորից հետո, շարքացանի արկղն ենք լցնում առ-  
վույտի սերմերը, իջեցնում ենք լծակը և սկսում պտտել անիվը  
ճիշտ 50 անգամ: Պատելու արագությունը պետք է համապա-  
տասխանի ցանելու արագությանը, շատ դանդաղ կամ արագ պտտ-  
տելիս, ճիշտ թիվ չենք կարող ստանալ:

50 անգամ պտտելուց հետո, բարձրացնում ենք լծակը, հա-  
վաքում բրդենտի վրա թափված սերմնն ու կշռում, յեթե 550  
գրամից քիչ է, անհրաժեշտ է կանոնավորելի միջոցով սերմ թա-  
փող անցքերը մեծացնել, իսկ յեթե 550 գրամից շատ է, ընդհա-  
կառակը՝ պետք է փոքրացնել, ու նորից 50 անգամ պտտել,—մին-  
չև կատանանք 550 գրամ, այդ ժամանակ չափում ենք սերմ թա-  
փող անցքերը սովյալ լայնությունն ու գրում մի վորևե տեղ, վոր-

պիտակի չմոտանանք, ու յերբ ցանքն սկսվում է, կանոնավորելիչ միջոցով սերմ թափող անցքերին տալիս ենք զբաժ մեծութունն ու սկսում ցանել: Այդ աշխատանքը կատարվում է նախ քան ցանքըն սկսելը:

## ՅԱՆԵԼՈՒ ԶԵՎԸ

Առաջին տարին սովորաբար առվույտը քիչ է բերք տալիս, իսկ շատ տեղերում՝ բոլորովին չի տալիս: Արդևադի չզրկվենք այդ տարվա բերքից—առվույտը ցանում ենք մի վտրևե մշակութայն մեջ—կամ ինչպիս ասում են ծածկոցով. ցանվում է նաև առանց ծածկոցի: Առվտղներն ու կոլխոզները պիտի իմանան ցանքի այդ 2 ձևի առանձնահատկութունները, վորպեսզի տեղում ճիշտ լուծեն խնդիրը:

Արտթյան մի շարք գիտահետազոտական հիմնարկներ գըտնում են, վոր ծածկոցով առվույտ ցանելը ձևնտու յև, ահա թե ինչու.

1. Կանկոցով բույսը (սովորաբար մեղ մոտ աշնանացան կամ զարնանացան հացփառակի) առաջին տարին տալիս է ավելի շատ բերք, քան առանց ծածկոցի.

2. Առանց ծածկոցի առվույտի ցանքը մոլախոտով վարակված հողերում պահանջում է ահադին ծախս, մոլախոտերի դեմ պայքարելու համար, առանց վորի դրական հետևանք, այսինքրն՝ լավ բերք չենք ստանա: Յեթև նման հողերում ցանքը կատարված է լինում ծածկոցով—մոլախոտերի վտանգը փոքրանում է, վորովհետև ծածկոց բույսը խեղդում, փշացնում է մոլախոտերին:

3. Յերբ առվույտը ծածկոցով ենք ցանում, առվույտի ծախսը պակասում է, վորովհետև համարյա բոլոր ծախսերն ընկնում են ավյալ ծածկոց բույսի վրա:

4. Յեթև յերկու տարվա ստացած բերքը վեր անենք կեբր միավորներին, կտեսնենք, վոր ծածկոցով ցանելու դեպքում շատ ենք ստանում: Որինակ՝ Ռուսաստանի Նոսովսկի փորձադաշտում մեկ հեկտարից՝ այն է առաջին տարվա վարսակից (ծածկոց) է յերկրորդ տարվա առվույտից ստացվել է 7935 կերի միավոր բերք, մինչդեռ 1 հեկտար առանց ծածկոցի առվույտից միևնույն ժամանակամիջոցում, ստացվել է միայն 6856 կերի միավոր, այսինքն՝ ծածկոցով ցանելու դեպքում, միայն առաջին յեկ յերկրորդ տարում սնանարյունը բախում է յուրաքանչյուր հեկտարին 1000 կերի միավոր:



Ընդհանրապես ծածկոցով պետք է ցանել և դա ձեռնտու յե հետևյալ տնտեսությունների համար.

1. Բոլոր հացահատիկային և անխնիկական կուլտուրաների թեքում գունեցող տնտեսություններում.

2. Այն անասնապահական տնտեսություններում, վորտեղ ցանքաբջջանաության մեջ մտնում է և հացահատիկը.

3. Բոլոր տիպի տնտեսության շրջի հողերում. վերջինս անհրաժեշտ է շեշտել, վորովհետև շատերը կարծում են, թե Ձկուլտուրա միևնույն սարին ցանելու դեպքում, հողում ջրի կրիվիս դդացվում է:

Սակայն յեթե տվյալ տնտեսությունում բարձր է ադրտեխնիկան, մաքուր են գաղտերը մուխտտերից, այդպիսի տնտեսություններում հնարավոր է ցանել և առանց ծածկոցի:

## ԻՆՁ ԽՈՐՈՒՅՑԱՄԲ ՊԻՏԻ ՑԱՆԵԼ

Առվույտի սերմը շատ մանր է, իսկ ծիւնըը նուրբ, ուստի չի կարելի շատ խորը ցանելը Շատ դեպքերում գյուղացիները նույնիսկ փոցիտով չեն ծածկում, այլ «չափարում» են: Շարքացանի դեպքում անհրաժեշտ է մեքենան յերես գցել, վորպիսով սերմերը շատ խորը չընկնեն: Նպատակահարմար է ցանել 1—2 սանիմետր խորությամբ:

## Խ Ն Ա Մ Ք Ը

Շատ բերք ստանալու համար, անհրաժեշտ է ուշագիթ խրնամք ունենալ առվույտի ցանքին, այն է՝ ժամանակին ջրել, պայքարել մուխտտերի ու վնասատուների դեմ, պարարտացնել և այլն: Այդ բոլորը ժամանակին կատարելը յերբեք հնարավոր չէ անհատական ցիր ու ցան տնտեսություններում: Բոլոր տեսակի խնամքը ժամանակին կատարելու համար, անհրաժեշտ է ունենալ միջոցներ ու պլանային աշխատանք, վորով ապահովված են միայն խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները: Հետևապես՝ ժամանակին ջրել, ժամանակին պարարտացնել, ժամանակին պայքարել մուխտտերի և զանազան հիվանդությունների դեմ՝ միայն հնարավոր է խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում: Եթե այդ բոլորը հնարավոր է կատարել նման տնտեսություններում, ուրե՞նք բարձր բերքն էլ հնարավոր է և պետք է ձգտեն ստանալ խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները:



Առվույտը ձուլւմ է 7—10 որ նկատ. առաջին շրջանում բույսը դարդացնում է իր արժատային սխտեմը. հետ մի շրջան, յերբ ժողովատեսը կարող են մեծ ֆլուս հասցնել նրան. ինչպես պիտի վաճառեցնել մոլորատեսը. նախ շատ կարեւոր է մինչև ցանկէն այնպես կողմակերպոված լինի հողի նախապատրաստումը, վոր ժողովատեսը չլինեն, մանավանդ ինչպես չայիրն է, զգանդուրդանը, դասնաչքը և այլն:

Եարջացանի դեղքում բովականին հեշտանում է աշխատանքը զնորհիվ մեքենաների Մոլորատեսի դեմ պայքարը կատարվում է դանսդան բազմաթաթ կաւտիվատորներէ միջոցով

## Բ. Զ Ր Ե Լ Ը

Ջուրը հանդիսանում է ինչպես սյուղացիներն են ասում, ստովույտի հողին. վորքան ժամանակին ջուր հասցրիք, այնքան առատ բերք կվերցնես Մեզ մտ, գաշտավայրերում է նախալեռնային շրջաններում, սովույտը մշակվում է միայն ջրովի պայմաններում. ջրելը լայլ է ազդում յուրաքանչյուր քաղից հետո. լրացուցիչ ջուր պիտի ապ այն ժամանակ, յերբ նկատվում է պահանջ, իսկ այդ շատ հեշտ է վորոշել,—կարելի չէ նկատել տերևներէ դույնից, թոտամնուց և այլն: Զրի կարիք ունեցող բույսերի տերևները Հայաստանի պայմաններում, նախանավանդ գաշտավայրերում, չկատարւմ են. ամառը ջուրը դործ է անվում ավելի կարեւոր մշակույթի համար.—այն է՝ բամբակի Հնարավոր չի լինում ամառը ժամանակին ջուր հասցնել առվույտին, վորի հետանցով բերքն իջնում է:

## Գ. Փ Ո Յ Խ Ե Լ Ը

Առվույտի ցանքի հողը 2-րդ, 3-րդ և հետագա տարիներում նստելով կարծրանում է, իսկ այդպիսի կարծր հողում բույսը վատ է աճու. 2-րդ տարում վաղ դարնանն անհրաժեշտ է առվույտի գաշար փոցիսել «զիդ-զազ» յերկաթյա փոցիտով՝ մի քանի ուղղութիւններ Փոցիսելն անհրաժեշտ է նաև ամեն մի քաղից հետո և այդպես շարունակելով յուրաքանչյուր տարի Փոցիսելուց առվույտի բերքն ավելանում 15—20<sup>0</sup>/<sub>10</sub>-ով, իսկ վոր ամենակարեւորն է, սովույտը հնարավորութիւն է ստանում միևնույն տեղում յերկար մնար

Խնդիրն այն է, վոր հողը կարծրանալով, նախ հողում գըրտնվող խոնավությունն արագ է գոլորշիանում, ապա պակասում է հողի մեջ ողի քանակը, իսկ առանց համապատասխան քանակությամբ ողի և խոնավության, ընդհանրապես, բոլոր բույսերը վաս են աճում: Փոցխելուց փխրանում է հողի վերին շերտը, գոլորշիացումը կատարվում քիչ և բացի այդ, հողն ալիլի շատ ող է պարունակում:

Չպետք է վախենալ փոցխելու հետևանքով արմատի վրա առաջացած վերքերից, այդ վոչ միայն ֆուսս չէ, այլ ընդհակառակը, նպաստում է ամփոշյաի ուժեղ թփակալման, վորովհետև արմատի վերք ստացած տեղերից դուրս են դալիս ու դարգանում նոր ցողուններ:

Առվույտի արմատը փոցխելուց չի առժոււմ, վորովհետև արմատի հիմնական մասը շատ խորն է:

Փոցխելուց վոչնչանում են բոլոր տեսակի մոլախոտերը. Ամերիկայում առվույտի հին, «ծերացած» ցանքերը, վորոնք սկսում են քիչ բերք տալ, փոցխելու միջոցով թարմացնում էյրերիտասարդացնում են. այդ նպատակով անհրաժեշտ է առվույտը 4—5-րդ տարում զարնանը դիակալոր փոցխով լավ փոցխել, փխրացնել զաշար, վորից հետո նա զարձյալ սկսում է բարձր բերք տալ:

## ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Առաջին տարին առվույտի ցանքի պարարտացման մասին վերև հիշեցինք, յերբ խոսում էյինք հողի նախապատրաստման վերաբերյալ Ասկայն դրանով միայն բավարարվել չի կարելի Առվույտը 2-րդ, 3-րդ և հետագա տարիներում մեծ քանակությամբ հանքային նյութեր և վերցնում հողից: Պարարտացնել կարելի յև գոմաղբով, մոխրով, հանքային պարարտանյութերով և այլն:

Գոմաղբով պարարտացնելիս անհրաժեշտ է, վոր գոմաղբը լավ պատրաստված լինի, այսպես կոչված «այրված». հակառակ դեպքում մենք անդիտակցաբար մոլախոտի սերմեր կմտցնենք ցանքի մեջ: Գոմաղբը չի կարելի աշնանից կույտ-կույտ պահել առվույտի ցանքում, վորովհետև ձյունի և անձրևի ջրերից սնընդաբար մասերը լուծվում, հեռանում են: Գոմաղբը պետք է պահել վորևե ծածկոցի տակ և շաղ տալ վաղ զարնանը:

Մեր մի շարք շրջաններում հսկայական քանակությամբ մոխիր և հաղաքովում, անհրաժեշտ և այդ ողտաղործել զորպես պարարտանյութ: Մոխրով պարարտացված առվույտի ցանքը բարձրացնում և բերքը 25-30% -ով: Մոխիրը չի կարելի աշնանից շաղ տալ կամ դաշտ տանել: Հարկավոր և ձմեռը կուտակել մի չոր տեղ, ծածկողի տակ, զորովհետև անձրևի և ձյան տակ ջրերից լուծվում են մոխրի սննդարար մասերը և հեռանում: Մոխիրը դաշտ պիտի տանել դարձանը և առվույտի ցանքի վրա հաջաասար կերպով շաղ տալ:

## ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Առվույտի անհրաժեշտ հիմնական սնորդանական նյութերն են՝ ազոտը, ֆոսֆորը և կալիև:

Գիտենք, վոր առվույտն ազոտը վերցնում և առանց մեր ոչնուխյան՝ ոչից: Փորձերը ցույց են տալիս, վոր մեր հողերը կալիով հարուստ են, այսպիսով մեր առաջ խնդիր և գլուխ, առվույտին ոչնուխյուն հասցնել հանքային պարարտանյութերից միայն ֆոսֆորով: Ֆոսֆորային պարարտանյութերից առվույտի նկատմամբ սովորաբար գործ են ածում սուպերֆոսֆատը:

1928 թվին Տաշկենտի փորձակայանի սուպերֆոսֆատով պարարտացման փորձի արդյունքը հետևյալն է.—

Առանց պարարտ. 1 հեկտ. 4675 կ. գ.

Սուպերֆոսֆատով 1 » 5345 կ. գ.

Ճիշտ է, առվույտի դաշտը պարարտացնելը պետք և կատարել նախ քան ցանելը, բայց կարելի չէ պարարտացնել նաև հին ցանքերը:

Այդ կատարվում և միայն վաղ գարնանը, հակառակ գետքում, ուշացնելիս՝ կարող են այրվել առվույտի կանաչած ցողունները:

Վորպեսզի պարարտանյութերը քամուց չփչանան, վաղուց խտնում ենք խոնով հողի հետ:

Պարարտանյութը շաղ տալուց հետո, պետք և փոցխել հասարակ կամ սկալառակավոր փոցխով: Պարարտացումն ավելի տղասկար և, յերբ անձրևից առաջ ենք կատարում: Սուպերֆոսֆատով կարելի չէ պարարտացնել յուրաքանչյուր քաղից հետո, սակայն նպատակահարմար չէ, զորովհետև չի արգարացնում իրեն:

Ուղղակիստանի փորձակայանի պարարտացման փորձը տվել է բերքի հետեյալ արկւացումները <sup>0</sup>/<sub>10</sub>-ներով:

	Զպարարտ.	Պարարտ.	Պարարտ. և գարնանը	Պարարտ. և 1-ին ք. հետո	Պարարտ. և 2-րդ ք. հետո
1925 թ.	0	57,9	128,7	5,3	
1926 թ.	0	24,8	12,5	3,0	

Աղուսակից պարզ յերևում է, զոր 1-ին և 2-րդ քաղից հետո պարարտացնելն արկւացնում է բնրքը չնչին տոկոսով, իսկ գարնան պարարտացումից արկւանում է բնրքը 57<sup>0</sup>/<sub>10</sub>-ով:

Նախկինում կարծում էին, թե պարարտանյութերն ազդում են միայն շաղ արված տարին, բայց փորձերը ցույց են տալիս, զոր պարարտանյութերն ազդում են նաև 2-րդ, 3-րդ և հետագա տարիներին:

Ուղղակիստանի փորձակայանի պարարտացման փորձը տվել է հետեյալ արդյունքը (կիլոգրամներով):

Շաղ արված տարին	Առանց պարարտաց.	Պարարտաց. սուպերֆոս.
1925 թ.	2416 կ-գրամ	3918 կ-գրամ
1926 թ.	4480 »	8592 »
1927 թ.	688 »	1880 »

Այստեղից պարզ կարելի չէ նկատել, զոր պարարտանյութերը զոչ միայն շաղ արված թվին, այսինքն 1925 թ. բերքն արկւացրին, այլ արկւացրին բնրքը 2-րդ տարին՝ 1926 թվին և 3-րդ տարին՝ 1927 թվին:

## ԱՌՎՈՒՅՏԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Մեզ մտ առվույտի ամենատարածված և ամենավտանգաւոր հիաստուծները՝ թրթուռը և «գայլուկն» են կամ ինչպես գյուղացիներն են ասում «գաղձը» (կուսկուտա): Թրթուռից շատ է տուժում առվույտի առաջին բերքը: Յեթե հազվելու լինենք, ամբողջ Հայաստանում բերքի 30<sup>0</sup>/<sub>10</sub>-ը վնջնանում է թրթուռից, իսկ դա հսկայական արժեք է կազմում:

Այդ թրթուռները դարգանում են միջատների դեռ նախորդ տարվանից դրված ձվիկներից, զորոնք ձմեռը ցրտահար չեն լինում: Գարնանն այդ ձվիկներից դուրս են գալիս վերահիշյալ թրթուռները և սկսում արագ կերպով սնվել առվույտի մատղաջ տերիներով, թողնելով տերևի ջղերը:

Հետվից թրթուռով վարակված առվույտի ցանքը նկատելի չէ, նա կորցնում է իր կանաչ գույնը, դորչանում է, բույսերը

չեն դարգանում, կանդ են առնում: Այդ թրթուռները դեմ պայ-  
քարելու համար կան մի շարք միջոցներ. նախ՝ վարակվելու դեպ-  
քում անհրաժեշտ և հնձել ու այրել, կամ առանց քաղելու թող-  
նել անասուններին արածելու. քաղելուց կամ արածեցնելուց հե-  
տո անմիջապես ջրում ենք ցանքը:

Սակայն հնձել կամ արածեցնել, սրանք պայքարի պասսիվ  
ձևեր են և չեն համապատասխանում սովխողների և կոլխողների  
պահանջներին՝ թրթուռների դեմ ակտիվ պայքարելու քննիական  
միջոցն և, որինակ՝ կրաջուրը. թրթուռը նկատելուն պես, առանց  
ժամանակ կորցնելու, անհրաժեշտ և կրաջուրը պարաստել և մի  
քանի անգամ սրսկել: Վարքան ուշացնենք սրկումը, այնքան  
զժվար և զոչնչացնել թրթուռներին: Ավելի լավ և ոգնում ջիպ-  
սինը և սրա նման մի շարք նյութեր. այս հարցով դրադվում են  
ներկայումս մեր հետազոտական կայանները: Պակաս քիսս չի  
տալիս եղայուկը՝ կամ եղադձը. այն դեպքում անհրաժեշտ է,  
վոր ցամախ սերմի մեջ գայուկի սերմ չլինի, վորի նմանք էլ սերմը  
պիտ է անպայման սուզել սերմ սուզող կայաններում: Առվույթի  
սերմի մեջ գայուկի սերմ շատ լինելու դեպքում, արդելվում է  
ցանել: Վո՞րն և գայուկը՝ կամ եղադձը.— սա պարագիտ ըստյա  
է, այսինքն ապրում է առվույթի հազվին: Ունի շատ մանր սեր-  
մեր, վորոնց առվույթի սերմերից անշատել մի քիչ զժվար է:  
Վերջերս միայն նկատարական ժապավենի միջոցով են անշատում  
այդ սերմն առվույթից: Դայուկի սերմը խորդ ու բորդ է, իսկ  
առվույթինը՝ վոչ: Յերբ նկատվում է, վոր առվույթի սերմի  
մեջ գայուկի սերմ շատ կա, խառնում են յերկաթի մանր վոչի.  
չնորհիվ գայուկի սերմի խորդութեան, յերկաթի վոչին մըս-  
նում է այդ փոսիկները մեջ և յերբ անց ենք կացնում մադնիտ-  
յա ժապավենով, գայուկի սերմերը նսում են ժապավենի վրա և  
ստանում ենք մաքուր առվույթի սերմ:

Դաշտում ցանելուց հետո ձլում է նաև դայուկը: Առվույ-  
թին կասչելուց հետո կարվում է իր արմատից ու ծծիչների մի-  
ջոցով ձձում և սրա ցողունների սնունդը:

Դայուկի ցողուններն սպիտակ թելիկներ են, վորոնք վա-  
թաթվելով առվույթի ցողուններին, շատ կարճ ժամանակամիջո-  
ցում տարածվում են ամբողջ ցանքում: Բիչ լինելու դեպքում,  
անհրաժեշտ է անմիջապես վարակված թփերը հաժաքել ու այրել.  
Իսկ յեթև ամբողջ ցանքն է վարակված, հարկավոր է նախ քան  
դայուկի ձաղկելը հնձել առվույթը: Իսկ ամենակարևորն այն է,  
վոր սերմն ստուգված լինի սերմ ստուգող կայանների կողմից:



## ԱՌՎՈՒՅՑԻ ՀՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Շատ կարևոր և առվույտը հնձել ժամանակին: Ժամանակին հնձելն ազդու է ստացված խոտի վորակի վրա և հաջորդ քաղի քանակի վրա:

**Ստացված առվույթի չոր խոտի քիմիական կազմը.**

Հնձի ժամանակը	Չուր	Մոխր	Քաղանթանյութ	Ճարդ	Ազոտային նյութեր	Սպիտակուցային նյութեր	Անոթա-կազմարար նյութեր
Հատուկներ ծաղիկ	9,06	10,37	26,62	2,21	18,92	15,54	32,79
Լրիվ ծաղիած	8,62	9,70	32,09	1,59	17,18	13,97	30,79
Մաղկելուց հետո	10,54	8,75	32,57	1,62	14,38	10,96	32,14

Այս թվերն ապացուցում են, վոր ամենանպատակահարմար ժամկետն այն է, յերբ հատուկներ ծաղիկներ են յերևում. այդ ժամանակ հնձած խոտն աղիկի շատ աննդարար նյութեր և պարունակում, քան ուշ հնձածը: Ընդհանրապես, լրիվ ծաղիկան շրջանում աղիկի շատ խոտ և ստացվում, սակայն ցածր ժութակով:

**Առվույթի չոր խոտի բաղադրիչ մասերի քիմիական կազմը**

	Ցուրտներ	Տերեխներ	Մաղիկներ
Սպիտակուց . . . . .	10,8	22,2	32,2
Ճարդ . . . . .	0,5	2,6	1,5
Քաղանթանյութ . . . . .	52,0	15,5	16,5
Մոխիր . . . . .	6,2	10,3	9,6

Այս թվերը ցույց են առնում, վոր խոտի ամենամանդարար մասը—այն և սպիտակուցային նյութերը, վորոնք մեծ նշանակություն ունեն անասուններին համար, կուտակված են տերեխներում և ծաղիկներում, ահա ինչու յե անհրաժեշտ հունձը չուշացնել և այնպես վարվել, վոր խոտի թանկարժեք մասը՝ տերեխներն ու ծաղիկները չորացնելու, դաշտում չմնան:



Անրմի խնդիրը շատ կարևոր և լավ բերք և տալիս այն սերմը, վորն ստացվում և մեզ մոտ տեղական տեսակներից, վորովհետև հարմարված և լինում կլիմայական ու հողային պայ-  
ցիֆիկ պայմաններին: Հայաստանում, բացի հատ ու կենտ փոր-  
ձերից, դեռ մասսայականորեն չենք անցել սեղական առվույտի  
սերմի պատրաստմանը: Պետք և կատարենք Հ. Կ. (բ) 4 Ց-րդ  
համազումարի վորոշումը — կազմակերպենք 60 սերմաբուծական  
կայտողներ:

Մենք ունենք այն բոլոր նպաստավոր պայմանները, վորոնք  
պահանջվում են հատկապես ասվույտի սերմ ստանալու համար:  
Մենք պետք և ոգտագործենք տեղական ասվույտը:

Հայտնի յեն Ախտայի, Դարալագյաղի, Ջանգեզուրի, Նախի-  
ջևիանի ասվույտներն իրենց լավ հատկութուններով, սրանք  
դարեր շարունակ մշակվել են այդ վայրերում, դարերի դոյության  
պայքարում ձևք են բերել սքանչելի հատկութուններ: Անտե-  
սելով այդ, մենք դեք դիմում ենք ուրիշ յերկրներ, շատ անգամ  
շատ հետև.— սերմ ստանալու համար Արդյունքը լինում և այն, վոր  
կամ չենք ստանում, կամ վատն ենք ստանում, կամ ուշ ենք ըս-  
տանում: Միշտ ել յեղիւն են գետքեր, յերբ սերմի բացահայտության  
պատճառով չենք կարողացել կատարել մեր պլանները: Առվույտի  
լավորակ սերմ ստանալու համար, հաշվի պիտի առնել ցանքի մի  
շորք ասանձնատակութունները, վորոնց անտեսելն անշուշտ կազ-  
դի ստացված սերմի թիւ վորակի և թիւ քանակի վրա: Չի կարելի  
պատահական սերմերն ոգտագործել սերմացու ցանքի համար. ան-  
հրաժեշտ և վերցնել այնպիսի սերմ, վորն աչքի ընկնի իր բարձր  
վորակով և բերքաավությամբ, յերաշտի, ցրտի, հիվանդութուն-  
ների զիմացիւնությամբ, վորը հարմարված լինի մեր պայման-  
ներին և այլն: Հայաստանում, վորպես սերմաբուծական շրջաններ,  
հատկապես ասվույտի սերմ արտադրող շրջաններ են՝ Վաղարշապը,  
Ղուրգուղուլին, Ղամարուն, Դարալագյաղը, Դորխոր, Կոտայքը,  
Աշտարակը և այլն: Հողը, վորտեղ պիտի ցանվի ասվույտը սերմի  
համար, առաջին հերթին պետք և բոլորովին ազատ լինի մուշ-  
խտակից, վարից շատ և տուժում ասվույտի ցանքը. դրա համար  
անհրաժեշտ և աշնան հերկը, գորնան կրկնահերկը և փոցխը:

Ռուսաստանի մի շարք փորձակայանների փորձերը ցույց  
են ավել, վոր լայն շարքերով ցանված ասվույտի ցանքից ավելի

շատ սերմ և վերցվում, քան Նեղ շարքերով ցածրածից, Որինակ՝  
Բալաշովի փորձակայանի մի քանի տարվա տվյալները հետևյալն  
են ասում.

Սովորական Նեղ շարքերով ցանքի 1 հեկտարից ստացվել և  
» 168 կգ. սերմ  
լայն շարքերով » » 248 » »

Պոլտավայի փորձակայանի տվյալները դարձյալ նույնն են  
ասում:

Սերմի բերքը միջշարքային տարբեր տարածությունների  
դեպքում հաշված ցիտաներով.

Նեղ շարքերով ցանքի 1 հեկտ. . . . . 1,53 ցենտ.  
Միջշարքային տարածությունը 36 սմ. . . 3,03 »  
» » 56 » . . 3,47 »  
» » 72 » . . 2,29 »

Փորձերը միանգամայն ապացուցում են, վոր սերմի հա-  
մար առավելատի ցանքը պետք և կատարվի լայն շարքերով—40  
—50 սմ. լայնությամբ:

Լայն շարքերի դեպքում հնարավոր և մեքենայացման  
յենթարեկել խնամելու և մշակման աշխատանքները, ինչպես  
և մուխոտների դեմ պայքարը, փոցխելը փխրացնելը և այլն:

Սերմի համար կատարվող ցանքերը վոչ միայն լայն շար-  
քերով պետք և լինեն, այլ և նոսր ցանվին. պետք և բավա-  
րարվել 1 հեկտարում 7—10 կիլո սերմերով. ուրիշ յերկրներում  
1 հեկտարում ցանում են նույնիսկ 5 կիլո սերմ:

Սերմի համար նպատակահարմար և ցանքը կատարել  
առանց ծածկոցի. վոչ մի դեպքում սերմի արտադրության  
նկատմամբ ծածկոցը ձեռնտու չի, լինի դա դարի կամ ուրիշ  
հացահատիկ, վորովհետև ծածկոցի դեպքում սերմի քանակն  
ընկնում և:

Մնամքի տեսակետից՝ այն բոլոր ձեռնարկումները, ինչ  
պահանջում և ընդհանրապես առավելատի ցանքը, նույնը պահան-  
ջում և նաև առավելատի սերմադաշտը—պարարտացնել, ջրել,  
մուխոտների և ֆլասատունների դեմ պայքարել և այլն:

Հիվանդություններից այստեղ դայլուկի հասցրած ֆլասաը  
կրկնապատկվում, յիսապատկվում և. անհրաժեշտ և դայլուկով  
վարակված դաշտը վոչ միայն չողտագործել սերմի համար,  
այլ և նույնիսկ խոտ ստանալու համար ել չպահել: Դիչ վարակ-

ժամ լինելու ղեպզուս պետք է քաղել ու այրել, իսկ յեթե շատ և վարակիված, վարել ասվույտի ցանքը և տեղն ուրիշ կուտաւրա ցաներ:

### ՎՈՐ ՇՆՁԻՑ ՊԵՏՔ Ե ՍԵՐՄ ՎԵՐՅՆԵԼ

Մեզ մաս սերմարուծական սնտեսութեաններէ աշխարհադրական, կլիմայական պայմանները թույլ են տալիս 2—3 անգամ ասվույտի ցանքից խոտ հնձել. այդ տեսակետից բոլորովին նպատակահարմար չէ ասվույտի առաջին բերքը պահել սերմի համար, զորովհետեւ աս ասվորարար վարակիված և լինում զանազան մոլախոտերով: Նպատակահարմար և սերմը վերցնել 2-րդ հնձից. այս կարելի չէ կիրառել դաշտավայրերում, ինչպիսին և՛ Վաղպատը, Ղուրղուղուլին, Ղամաբուլուն և ուրիշները, — իսկ լիոնային շրջաններում, ինչպիսինք են, սրինակ՝ Ապարանը, այնտեղ բոլորովին նպատակահարմար չէ 2-րդ քաղը թողնել սերմի համար, զորովհետեւ այնտեղ հնձվում և 2 անգամ և յերկրորդ բերքից սերմ ավելի քիչ և ստացվում, քան առաջինից:

### ԱՌՎՈՒՅՏԻ ՍԵՐՄԸ ՀԱՎԱՔԵԼԸ

Ասվույտի սերմը սովորաբար հաճաքում են ցանքի 3-րդ և 4-րդ տարում, իսկ յերբ ցանքը կատարված և հասկապետ սերմի համար, կարելի չէ սերմը հաճաքել նաև 2-րդ տարում: Հունձը սերմի համար պետք է կատարել այն ժամանակ, յերբ պատելչներէ մեծ մասը մուգ գույն և ստանում: Ասվույտը պետք է հաճաքել առավայտան ցողի ժամանակ, հնձող մեքենայով, իսկ այդպիսիները չլինելու ղեպզուս, դերանդիով կամ մանդագով և խուրձ կապելու խուրձ կապելու հետացնել բոլոր ավելորդ մոլախոտերը: Գայուկով վարակիված ցանքերից, ինչպես քիչ զերև նշեցինք, սերմ բուսրովին չպետք է հաճաքել:

Խուրձերը չորանալուց հետո անդամոթիւն կալսելու վայրը հետագա վերամշակման համար:

### ԱՌՎՈՒՅՏԻ ԿԱԼՍԵԼՆ ՈՒ ՋՏԵԼԸ

Առաջին հերթին սովորական կալսոց մեքենայով, իսկ յեթե չկա, կամերով են կալսում ասվույտը, ցողունները հետացնելու նպատակով: Այնուհետև կրկին անգամ թնդն անց և կաց-

վում կալսիչի միջոցով: Յերբ սերմն ամբողջովին չի բաժանվում:  
անհրաժեշտ է և Յ-ըդ անգամ անց կացնել:

Արհեստական կերպով յերբեք չչորացնել թնդը, վորովհետև  
այդ դեպքում սերմի ծլունակութունը կկորչի. յերկու կամ  
յերեք անգամ սերմը պետք է անցկացնել քամհար մեքենայով:

Քամհար մեքենայով մաքրելուց հետո, սերմերը վերջնա-  
կանապես պետք է դառել դայրուկից հատուկ մեքենաների միջո-  
ցով. սերմը վերջնականապես մաքրելուց և չորացնելուց  
հետո, պետք է լցնել նոր, մաքուր, նախորդ ակտասանոված  
պարկերի մեջ, և պահել չոր ու մաքուր պահեստներում:

## Կ Ա Ր Ն Գ Ա Ն

Կորնդանը թիթևոնաձագիկներին պատկանող բազմամյա բույս եւ արմատները վրա պայարիկները մեկ գտնվող բակտերիաներն սղի ազոտը վերցնում են իրեն սնունդ և սնում նաև բույսերին:

Կորնդանը յերաշին դիմացող բույս և Յերաշտ տարիներին տալիս և ափելի շատ բերք, քան առվույտը և յերեքնուկը: Առողունները մոտ 1 մետր բարձրութեան են հասնում: Կորնդանը դեպի հողերը շատ քիչ պահանջկոտ և, աճում և ամենաքարքարոտ, անպահ կրային հողերում, ուր շատ քիչ կուլտուրաներ են աճում: Ունի ուժեղ զարգացած արմատներ՝ 1—2 մետր խորութեամբ: Կորնդանի արմատները մյուս կուլտուրական բույսերի համար անմատչելի հանքային նյութերը հեշտութեամբ յուրացնում են և սզաազորձում:

Կորնդանի արմատները շատ խորն են գնում, վորի շնորհիվ ողտվում են հողի խոր շերտերից, վորակցից ուրիշ մշակույթներ չեն սզաղում: Կրտսեր բույս և: Այն հողերը, վորոնք շատ աղքատ են կրից, կորնդանի համար այնքան ևլ նպաստափոր չեն: Կորնդանը կանաչ դուրյամբ ամառուցներին փորուողից չի պատնառում, ինչպես տավույսն ու յերեկուկը:

Ժամանակին հաղաքիտ կորնդանը գառնում և անասունների համար լաղ սննդարար կեր: Պարունակում և մեծ քանակութեամբ սպիտակուցներ և կեր: Կիրն անհրաժեշտ և յերկտասարդ, աճող անասունների վտակներն ամբացնելու համար: Կորնդանը մեղրատու բույս և, Եղողման սկզբից մինչև հնձելը տնում և 3-ից 10 ուր Այդ ժամանակամիջոցում մեղուները մեծ քանակութեամբ մեղրահյութ են ժողովում կորնդանի ծաղիկներից: Ահա ինչու համար մեր նախալեռնային և լեռնային շրջաններում, ուր զարգանում և անասնապահութունը, ուր մեծ քանակութեամբ կորնդանի ցանքեր կան, նպատակահարմար և նաև դրադվել մեղվաբուծութեամբ: Աղքատ ու վտա հողերում, վորտեղ



մյուս բույսերը լավ չեն զարգանում, կորնդանը ձեռնառու յե միևնույն տեղում պահել լավահանին յերկար ժամանակ, նույնիսկ մինչև 20 տարի, ինչպես անում են Ադրբեյջանում։ Այս դեպքում ամեն տարի թափված սերմերից նոր բույսեր են զարգանում։

Լավ հողերում ձեռնառու չե 4—5 տարուց ավել ոգտագործել կորնդանը։

Հայաստանում վաղուց է, վոր մշակում են կորնդան, բայց միայն մի քանի շրջաններում, ինչպիսին են՝ Սխիսանը, Գարալագյազը, Ախտան, Լենինականը և այլն։ Ծիշտ է, առաջին տարին մեծ բերք չի տալիս, սակայն 2-րդ, 3-րդ և հետագա տարիներին սովորաբար հնձվում է 2 անգամ, կորնդանը լինում է տարբեր տեսակի. կան տեսակներ, վորոնք առաջին տարին չեն ծաղկում և բերք չեն տալիս, կան կորնդաններ էլ, վորոնք առաջին տարին տալիս են միայն մեկ քաղ. սակայն Հայաստանում կան կորնդանի տեսակներ, վորոնք առաջին տարին հնձվում են 2 անգամ։ Այդ հատկութունը չափից դուրս ձեռնառու յե մեր անասնապահության համար՝ ամուր կերի բազա ստեղծելու տեսակեաից։

## ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ծիշտ է, վերը թվեցինք այն ըուրը հատկութունները, վոր ունի կորնդանը, սակայն դրանից չպետք է յեզրակացնել, թե կորնդանը կարելի յե ցանել առանց հողի լուրջ մշակման։ Այդ չափից դուրս սխալ կլինի Անհրուծեշտ և աշնանից հողը. պատճառաւոր ահա ինչպես. վարել շատ խորը, վորպիսդի նախ հողը փխրուն լինի, յերկրորդ՝ կուտակի մեծ քանակությամբ խոտավություն (ձմեռվա ձյունից և անձրևներից)։ Հողի փխրուն լինելն անհրաժեշտ է, վորպիսդի կորնդանի արագ աճող արմատները խորը գնան։ Գարնանը նպատակահարմար է փոքրել և ապա միայն ցանել։ Ձոր շրջաններում զարհան կրկնավարից պետք է խույս տալ։

Այն, ինչ վոր մենք սերմ ենք անվանում, իրենից միասերմանի պատիճ և ներկայացնում։ Սերմի քանակը կախված է սերմի վորակից—նրա ծյունակութունից, ցանելու նպատակից՝ խոտ ստանալիճ, թե սերմի համար, հողային և կլիմայական պայմաններից և վերջապես ցանելու ձևից։

Արքայապետը և ունենա վոչ պակաս 70<sup>0</sup> ծրուանկութիւն: Աստ ստանալու համար պիտի ցանել ամէկի խիտ, քան սերմ ստանալու համար: Զոր շրջաններում պետք և խուշա տալ խիտ ցանելուց, անհրաժեշտ և նոսր ցանել: Մոյախոտներով ծածկված հողերում խիտ պիտի ցանել: Շարքացանով ցանելիս, պետք և վերցնել 100—125 կիր, շաղաքանի դեպքում ավելի շատ՝ 120—140 կիր:

## ՅԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Կորնդանը ցանվում և մեծ մասամբ գարնանը. սառնամանիքներից շատ չի վախենում: Կարելի չե ցանել գարնանը բազմական վաղ. սերմերը ձիւլու համար պահանջում են շատ խոնավութիւն, վորի պատճառով ցանկալի չե ցանելուց առաջ 1—2 սր սերմերը թրջել, վորպեսզի խոնավութիւն կլանեն, ապա նոր ցանել Այդպես են վարվում, յերբ հողում բազմականացի խոնավութիւն չկա: Վորքան շուտ և ցանվում, այնքան միանալուստը և լաղ և կանաչում:

## • ՅԱՆԵԼՈՒ ՁԵՎԸ

Կորնդանի ցանքի ձևը կախված և տվյալ շրջանի հողակլիմայական պայմաններից:

Յեթն ամյալ շրջանի միջնորոտային տեղումները շատ են, կորնդանը պետք և ցանել ծածկացով, իսկ չոր շրջանում անպայման առանց ծածկացի, վորովհետև ծածկող բույսը՝ ամյալ դեպքում վորեն հացահատիկային բույսը, ոգտվում և խոնավութիւնից, ինչպես կորնդանը: Արքայապետական նպատակներին համար անպայման պետք և ցանել առանց ծածկացի:

Կորնդանը ցանում են միմիայն շարքացանով, այն և շարքը շարքից 10 ս. հեռավորութիւնով:

## ԻՆՉ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՅԱՆԵԼ

Կորնդանի սերմերը պատիչներով են ցանում: Շատերը խարվելով պատիչներին մեծութիւնից, կարծում են, վոր կարելի չե խոր ցանել: Մինչդեռ խկական սերմերի մեծութիւնը հազիվ թե տարբերվի տվույտի սերմի մեծութիւնից: Հետևապես, խոր ցանելու դեպքում միւրը նուրբ լինելով, կարող են չկանաչել, դրա համար կորնդանը պետք և ցանել 2—3 սանտիմետր խորութիւնով:

Առաջին տարին կորնզանն առանձին խնամք չի պահանջում և ընդհանրապես հետագա տարիներում ել նա պահանջկոտ չէ։ Այժմ ընկնող խնամքն այն է, վոր յերկրորդ տարին՝ վաղ գարնանն, անհրաժեշտ է կորնզանի դաշտը փոցխել «զիգ-զագ» կամ այլ փոցխով։ Չպետք է կասկածել, վոր փոցխելը կարող է քիչ ևս հասցնել ցանքին, ընդհակառակը, ուրիշ յերկրների փորձը ցույց է տալիս, վոր փոցխելը վոչ միայն չի վնասում, այլ, ընդհակառակը՝ նպաստում է բույսի հետագա ուժեղ անմանը։ Քարնան փոցխից դատ, անհրաժեշտ է փոցխել նաև յուրաքանչյուր քաղից հետո։ Փոցխելը բարձրացնում է կորնզանի բերքը։

ՀՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Քաղը պետք է կատարել ժամանակին, ուշացնելու դեպքում ստացվում է կոպիտ կեր, պակասում են սննդարար մասերը։ Քաղի ուշացումն արդու է նաև հաջորդ բերքի քանակի վրա։ Արքան առաջին քաղը ժամանակին է կատարվում, այնքան 2-րդ քաղը լավ է լինում։ Հյուսիսային յերկրներում տալիս է 25—30 ցենտ. խոտ. մեկ ժոռ, լավ մշակելու դեպքում, մեկ հեկտար կորնզանը առաջին տարում տալիս է 30—50 ցենտներ չոր խոտ։

Կորնզանի փմխակամ կտգը կախված քաղի ժամանակից—Բեզենչուկի փորձակայանի սլյակներով.

	Չոր	Մոխր	Քաղանկ- թանյութ	Ճարպ	Ազոտային նյութեր	Ազոտակ- նյութեր	Անօրգան կազմակա- տարին նյութեր
Մինչև ծաղկելը կտին	6,27	7,00	21,77	3,48	16,40	15,06	45,08
Ծաղկման շրջան . . .	8,04	7,68	17,97	2,87	19,44	17,59	45,00
Մաղկելուց հետո . . .	6,22	6,75	25,41	4,05	14,82	19,71	42,75

Այս թվերը պարզ ցույց են տալիս, վոր քաղը պետք է կատարել այն ժամանակ, յերբ բուրբից շատ սննդարար նույթներ, սպիտակուցներ են կուտակվում բույսերի մեջ. խիչ այդ տես-  
նում ենք ծաղկման շրջանում, վորից հետո այդ նյութերը

պակասում են, ավելանում թաղանթանյութերը և ստացված խոտը կոպիտ ու անվորակ և դառնում:

Չորացնելիս ուշադրութուն պետք է դարձնել, վորպեսզի տերևները և ծաղիկները չլին թափվեն, վորտեղետե սրանց մեջ և դանխում սննդանյութերի խոշոր մասը:

## ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կորնդանի սերմաբուծութունը հատկապես Հայաստանում ունի մեծ հետաքննարներ, վորտեղետե մեղ մաս տարածված են կորնդանի ամենալավ տեսակները, վորոնք հարմարված լինելով մեր պայմաններին, տալիս են խոտի և սերմի ամենաբարձր բերքը: Այդ կորնդաններից աչքի յեն ընկնում Սիսիանի և Նախիջևդանի տեսակները:

Այլևս արտադրելու համար անհրաժեշտ է նախ իմանալ թե ինչպիսի սերմ ենք բազմացնում, վորտեղից և նա ստացվել, ինչպիսի գիմացիականություն և ցուցաբերում յերաշախ, ցրտերի, հիթանդությունների հանդեպ և վերջապես ինչպիսի բերք և տալիս քանակի և վորակի տեսակետից:

Մեծ նշանակություն ունի ստացված խոտի վորակն ու քանակը. լավ վորակի խոտ է ստացվում ուժեղ թփակալվող, նուրբ ցողուններ ունեցող, մազմուկներից դուրի կորնդանի տեսակներից: Բերքի քանակը կախված է բույսերի բարձրությունից, նրա թփակալվելու հատկություններից, վազահասությունից, մշակության պայմաններից և այլն: Թվածս այս բոլոր հատկությունները նիշտ իմանալուց հաստ, նոր միայն կարելի չե բազմացնել ավյալ կորնդանի սերմը: Այս տեսակետից խոշոր արժեք են ներկայացնում կորնդանի տեղական տեսակները — Սիսիանի, Նախիջևդանի, Աղաբանի և այլն. սրանք տալիս են ամենամեծ քանակի և ամենաբարձր վորակի բերք:

Միևնև հիմա սերմաբուծությանը մեղ մաս լայն տեղ չի արվել. սերմի համար և պահելու, յերբ ցանկացել և տնտեսությունը: Այժմ պլանային ձեզով կառուցվող գյուղատնտեսությունից պահանջվում է պլանային սերմաբուծություն: Անասնապահության համար կերի բազայի հիմնաքարը կերբուրույանի սերմաբուծությունն է. որը որին աճում և կերբուրույանի տարածությունը, դրանց հարկավոր և սերմ հացները Սերմի բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ է, վոր հողը նախարք լավ մշակված լինի, միանգամայն մաքուր լինի մոլիսոտներից:

դրա համար անհրաժեշտ և աշնանից խոր վարել, գարնանը կրկնավարից հետո փոցխել ու նոր ցանել, վորքան սերմ և հարկավոր կորնզանի է հեկտ. դաշտի համար Անշուշտ սերմի ցանքը պետք և լինի նոսր, նոսր ցանված կորնզանի ցանքից ստացված սերմը և վորակով և լավ լինում և բերքը շատ և ստացվում. սերմի քանակն այդ դեպքում պետք և սովորական ցանքից <sup>1</sup>/<sub>2</sub>-ով պակաս վերցնել: Մեր պայմաններում սերմ ստանալու համար 1 հեկտարի վրա պետք և ցանել 80—100 կիլո սերմ:

Ցանքը պետք և անպայման կատարվի շարքացանով. սերմի համար շաղսցան յերեք չի թույլատրվում: Վոչ միայն շարքացանով պետք և կատարվի ցանքը, այլ և լայն շարքերով: Մի շարք փորձակայաններն փորձերը ցույց են տալիս, վոր սերմի ամենաբարձր բերքն ստացվում և այն դեպքում, յերբ շարքային տարածությունները միմյանցից հեռու յեն լինում 40—50 սմ:

Նման լայն միջշարքային տարածությունների դեպքում հնարավորություն և ստեղծվում միջևնայացման լենթարկել այն բոլոր աշխատանքները, վորոնց միջոցով բարձրանում և բերքը: Հաճախակի փոցխելով միջշարքային տարածությունները միանդամայն վերանում են մուլտիստերը ֆլորացումը հնարավորություն և ստեղծում, վոր հողում յնդած խոնավությունը խնայողաբար սպառվի և արագ չդուրլիանա: Սերմ ստանալու համար ցանքն անպայման պետք և կատարվի առանց ծածկոցի. ծածկոցը հաճախ աղղում և բերքի քանակի վրա, մանավանդ այն շրջաններում, ուր մթնոլորտային տեղումները քիչ լինելու պատճառով, հողում և լ խոնավությունը քիչ և լինում:

## ՍԵՐՄԱՑՈՒ ԿՈՐՆԳԱՆԻ ԽՆԱՄԲԸ

Սերմադաշտի խնամքն այնքան ևլ բարդ չէ, կորնզանը չի սուժում մնաստաուններից կամ հիվանդություններից: «Ջիզդադ»-ով վաղ գարնանը պետք և ցանքը մի քանի անգամ փոցխել: Նույնը պետք և անել և բերքը հավաքելուց հետո: Անհրաժեշտ և կազմակերպել նաև պարարտացման գործը. վաղ գարնանը սերմադաշտը պետք և պարարտացնել զամաղբով, մոխրով կամ քիմիական պարարտանյութերով, որինակ՝ սուպերֆոսֆատով: Անհրաժեշտ և նաև հաճախակի փոցխելու միջոցով պայքարել մուլախտերի դեմ:



## ՅԵՐԲ ՎԵՐՑՆԵԼ ՍԵՐՍԸ

Մեզ մտա տարածիյած կորնդանը մեկ անգամ և հնձվում, յերբեմն 2 անգամ. պարզ և, վոր առաջին տարին նրանք սերմ չեն տալիս. սերմի համար հնձվում և յերկրորդ տարին՝ Մի շարք փորձակայանների փորձերը ցույց են տալիս, վոր կորնդանի ցանքից սերմ ստանալուց հետո, բոլորովին չի ազդվում հետագա տարիների բերքը

Կորնդանն ալիլի կարճատև բույս և, քան առվույտը. հետևժապես սերմ վերցվում և միայն 2—3-րդ և յերբեմն 4-րդ տարում:

Սերմի համար պետք և վերջնել առաջին բերքը. 1 հեկտարից ստացվում և 8—12 ցենտներ սերմ:

## ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՍԸ ՀԱՎԱՔԵԼԸ

1. Մոզորարար կորնդանի առաջին տարվա ցանքից սերմ չի հավաքվում, սերմ ստացվում և միայն յերկրորդ, յերրորդ և այլ տարիներին, սակայն նպաստակահարմար և միևնույն ցանքից սպաղի սերմի համար 2 կամ 3 տարի

2. Մադիժան շրջանում անհրաժեշտ և մանրակրկիտ կերպով հետևել սերմի հասունացման ընթացքին, վորովհետև այդ կատարվում և շատ արագ:

3. Կորնդանի ցանքից սերմ հավաքելու ամենաճիշտ ժամկետը հաշվվում և այն մոմենտը, յերբ ցողունները մեծ մասն ներքին ունդերը կամ պտախչները զորջ դույն են ստանում:

4. Կորնդանի հասած սերմերը հեշտ են թափվում. սերմի բերքը չկորցնելու համար, անհրաժեշտ և հավաքել շուտ և առաժառայան ցողին

5. Հնձելուց հետո խուրձեր պետք և կապել և մի քանի որ պահել. կլանաչոր վիճակում անհրաժեշտ և փոխադրել կալսելու վայրը. խույս պետք և առ շատ չորացնելուց, վորովհետև սերմերը կթափվեն Տեղափոխելիս անհրաժեշտ և առջի մեջը ծածկել բերդկենտով կամ այլ շորով, մեծ քանակությամբ սերմ չկորցնելու համար:

6. Կալսելու վայրում կորնդանը մի քանի որ ևլ պահվում և չորանալու նպաստակով ու այնուհետև կալսվում:

7. Կալսվում և կորնդանը սոժորական կալսիչ մեքենայով, իսկ այնտեղ, ուր չկա այդ, կարելի չի և կաներով. հետո անցկացվում քամհարով և վերջապես՝ մաքրվում սերմապախչով:

8. Կորնղանի սերմը մաքրելուց հետո, անհրաժեշտ է բրկ-  
դենտների վրա փռել բարակ շերտով և չորացնելու նպատակով  
պահել արևի տակ, խույս տալով անձրևից և խոնավու-  
թյունից:

9. Չորացրած սերմն անհրաժեշտ է լցնել նախորոջ ախտա-  
հանված տուրակների մեջ և պահել միանդամայն չոր և ցամա-  
պահեցուցիչում, վորովհետև վատ և մանավանդ խոնավ պահեստ-  
ներում պահած կորնղանի սերմը շուտ է կորցնում իր ծլունա-  
կությունը:

Վ Ի Կ

Վիկր թիթեանձագիկները ընտանիքին պատկանող խոտաբույս և, վորը մշակվում և խոտ և սերմ ստանալու համար: Գործ և անվում նաև վարպես կանաչ կեր:

Վիկի կարևոր հատկութունն այն և, վորը նա տալիս և աննալով վարակի, նուրբ և սննդաբար է կեր: Արա մեջ քաղտկանին մեծ քանակությամբ սպիտակուցային և առհասարակ սննդաբար նյութեր ևն գանվում, քան մյուս խոտաբույսերի, նույնիսկ առվույթի ու կորնզանի մեջ:

Չոր յով կանաչ վիկի բիմբակում կտգր.

	Չոր նյութեր	Սպիտակուց նյութեր	Կարգ	Բարան- թանյու- թեր	Անպատ- կաբար կտային նյութեր	Մոխր
Չոր խոտ . . . .	83,5	14,2	2,5	25,5	32,8	8,5
Կանաչ խոտ . . .	17,6	3,8	0,6	9,0	5,5	1,7

Վիկր հողերի նկատմամբ առհասարակ պահանջկատ չէ. օտս իչ հողեր կան, վորտեղ վիկր զծվարուրյամբ անի (այսպես որինանհ՝ շատ խոնավ կամ շատ ծանր կալիքին հողերը):

Վիկր հացաբույսերի համեմատությամբ հաջող դարդացող արժատաներ ունի, վորսնք տվելի լավ ևն ուղտագործում հողի մեջ յեղած հանքային նյութը: Վիկի արժատաները վրա կան մեծ քանակությամբ պարարիկներ, վորտեղ գանվում ևն բազմաթիվ բակտերիաներ, վորսնք հողն ազոսով պարարացնելու յով բույսին ազոսով սնելու զգոծում մեծ դեր ևն կատարում: Մեզ մաս՝ Հայաստանում վիկի մշակութունը նոր և, չնայած մեր բոլոր շքրջաններում ցորենի ցանքերի մեջ հանդիպում ևնք վիկի բազմաթիվ մուխոտային տեսակների, վորսնք գյուղացիք պայուսկանունն ևն տալիս:

Վիկին ունի բազմաթիվ տեսակներ՝ գարնանացան և աշնանացան, — սովորական վիկի, թավոտ վիկի և այլն. թավոտ վիկիը սովորական վիկից տարբերվում է նրանով, Վոր նա ունի շողկույղաձև ծաղկափթթուլուն, ամբողջ բույսն ընդհանրապես ավելի մաղրատ է, իսկ սերմերը՝ մանր: Թավոտ վիկիը, սովորականի նման համեմատած, ավելի յն ընթելացած հողային յնվ չոր կլիմայական պայմաններին:

Բուսնուժ և համեմատաբար լավ և զարգանում նույնիսկ սովորատ հողերում: Թավոտ վիկիը մտնում են ավելի արտոս հողերում. սրա աչքի ընկնող հատկութունները յնկն են այն է, Վոր սրա մեջ կան տեսակներ, Վորոնք կարելի յն ցանել և՛ աշնանը և՛ գարնանը: Թավոտ վիկիը օտս քիչ է տալում առհասարակներին, Վորը հնարավորութուն է տալիս նույնիսկ լեռնային շրջաններում մըշակելու Բուսաստանի բազմաթիվ վորձադաշտերը ցույց են տալիս, Վոր թավոտ վիկիը դիմանում է նույնիսկ 20—25 աստիճան ցրտերի Չնայած կարելի յն ցանել նաև գարնանը, բայց ձեռնտու չէ, ավելի քիչ բերք է տալիս, քան աշնանը ցանելու դեպքում:

## ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒՅՑԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՅՑՈՒՆԸ

1. Վիկին առտոս յնվ լավ վարակի բերք է տալիս, (մեկ հեկտարից 40—50 ցնաններ չոր (սոս) և ապահովում է տնտեսութունը մեծ քանակությամբ կերով):

2. Մեր չոր յերկրագործական շրջաններում, Վորտեղ տնտեսութուններն ստիպված են ամեն տարի հողերի Վորոշ մասը թողնել ցելահող—խոնավութուն և այլ նպաստավոր պայմաններ տեղեկելու համար, նման ցելահողերից այդ տարին բերք չի վերցվում: Վիկիը հմարտվարարյուն է տալիս ոգտագործել նրան ցելահողը:

3. Մեզ մոտ թավոտ վիկի աշնանացան տեսակը գարնանը՝ ապրիլին կամ մայիսին, հնծելու համար արդեն պատրաստ է լինում: Հենց այդ ժամանակն է, Վոր տնտեսության խտտի պաշարը վերջանում է, իսկ վիկին ոգնության և գալիս:

4. Վիկիը ձիւլուց մինչև հնձելը տեւում է 55—65 օր. այս հանգամանքը թույլ է տալիս մեզ, հացահատիկները հնձելուց հետո, տեղը վիկի ցանել և մինչև աշնան ցրտերը հնձել. ի հարկե խոտքըս վերաբերում է նախալեռնային շրջաններին: Կարելի յն այլ կերպ էլ վարելու Աշնանը վիկիը ցանել, Վաղ գարնանը հնձել և

տեղը ցանկը ընդհանրապես ուշ ցանվող մշակույթներ (որինակ՝ կաղամբ, ճակնդեղ, նուշխակ ձխախոտ)։ այդ բոլորը հնարավոր է նախախոնային և չոր լեռնային շրջանների ջրով հողերում (որինակ՝ Կոտայքում, Գարալաղյազում, Ջանգեղուրում և այլն)։

Այսպիսով, Եմրոճիվ վիլի մեակուրյան, մինվնույն հողամասից մի ամառվա բերեցում կարելի լի վերցնել 2 բերք։

Վիլի սերմերը Եմրոսում են սննդաբուսերով. ուրիշ տեղերում վիլի սերմերը մանրացնելով կերակրում են անասուններին Անհրաժեշտ է նուշխակ մեղ մոտ վիլի սերմն ոգտագործել յորպես կեր։

## ՎԻԿԻ ՏԵՂԸ ՑԱՆԲԱՇՐՁԱՆԱՌՈՒՅՑԱՆ ՄԵՉ

Վիկը մեծ նշանակություն ունի այսպես կոչվող կերի ցանքաշրջանառությունում։ Ամենահարմար բույսն է զրադվող ցելերի համար։

Հին գյուղը կարծում էր, վեր ցելը հանդատացնում և հողն ու վերականգնում նրա ուժերը. այդ ճիշտ է, բայց վոչ անհրաժեշտ։ Հողի ուժերը վերականգնելու, նրա ֆիզիկական հատկությունները լավացնելու, նրանում խոնավություն կուտակելու և վերջապես կնձկային կառուցվածք ստեղծելու գործում վոչ միայն ցելի միջոցով և հնարավոր այդ բոլորն ստեղծել, այլ զրան կարելի լի հասնել ճիշտ և ժամանակին հողի մշակութամբ, ճիշտ ժամանակին պարարտացմամբ և ճիշտ ցանքաշրջանառություն կիրառմամբ։ Գերմանիայում, վերտեղ ցելը միայն ցանքերի 1—20/10 և կազմում, 2—7 անգամ բարձր և բերքը քան մեղ մոտ, հետևապես այստեղ խնդիրը ցելը չի, վերի տեղում մեղ մոտ հասնում է 25—30-ի և վերը հաճախ վաս մշակման հետևանքով դառնում է մուխոտների սջախ, այլ այն, թե ինչ միջոցով և ինչպես կարելի լի հողի վերակը լավացնել, վերականգնել նրա բերքատվությունը, կուտակելով նրա մեղ սննդարար նյութեր։ Հողը կարելի լի պարարտացնել դոմադրով, հանքային պարարտանյութերով և լավ մշակելով ստեղծել նպաստավոր միջավայր բույսերի զարգացման համար։ Վիկը և նման բույսերը (լորին, սոյան, մալը և այլն) կարող են իրենց արմատների միջոցով հարստացնել հողն ազոտով ու անսպաս ազրյուրի հաղվին։ Ուրեմն, յեթե վիկը լավացնում է հողի վերակը, հարստացնում է ազոտով ու հաջորդ բույսի բերքն ազելացնում, ապա պետք է բոլոր հողերը, վերոնք թագնվում են



վորակն ցել, զբաղեցնել վիկով: Այսպիսով ցանքաշրջանառութեան մեջ մենք աղատ հող չենք ունենա և մեկ տարվա հողի բերքից ել չենք զրկվի:

Վիկի գաշտից հետո կարելի յի ցանել միայն դարնանացան, իսկ խոնավ շրջաններում նաև աշնանացան և ընդհակառակը՝ վիկը կարելի յի ցանել թե՛ աշնանացանից և թե՛ դարնանացանից հետո: Այդ բացատրվում և նրանով, վար վիկը վարպետ անման կարճատև շրջան ունեցող բույս, կարճ ժամանակ և զբաղեցնում հողը, վարը հավաքելուց հետո, հնարավոր և լինում հողը նախապատրաստել այս կամ այն կուլտուրայի համար:

Վիկի սերմերի յիվ ստացված դաշմանի ֆիսիակամ կազմն բաժնի

	Չոր նյութից	Սպիտակուց, նյութից	Ճարպ	Քաղցն- թանյու- թից	Անոթո- ւորոց կապի՛ն նյութից	Մոխր
Սերմը . . . . .	86,4	27,5	2,3	6,7	47,2	2,7
Դարձանք . . . . .	85,4	7,0	2,0	42,6	28,1	6,0

Այս թվերը ցույց են տալիս, թե՛ վորքան հարուստ և վիկի սերմն սպիտակուցային նյութերով, վորքանք խոշոր նշանակութուն ունեն անասունների սննդի համար:

### ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒՅՑՈՒՆԸ

Վորովհետև վիկի ցողունները կանգուն չեն, ուստի վիկը ցանում են սովորաբար վորևե հացարույսի հետ. աշնանացանի դեպքում՝ աշտրայի հետ, զարնանացանի դեպքում՝ վարսակի կամ դարու հետ: Առանց հացարույսի վիկը պտուղած և, խճճված, լավ չի զարդանում, լավ սերմ չի տալիս, ցածրի տերևներն սկսում են լիտել, դժվար և հնձվում:

### ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Բոլոր մշակովի բույսերն իրենց նորմալ զարգացման համար պահանջում են՝ լույս, ջրմուկություն և սննդաբար նյութեր: Այդ պայմաններից և կախված բույսի բարձր բերքը, Յեթե մենք կանոնավոր մշակենք հողը, մտցնենք այնտեղ պահանջված պարարտանյութերը և ժամանակին ու կանոնավոր ցանենք, կարող ենք մեր ցանկապած բարձր բերքը վերցնել:

Վիկի համար անհրաժեշտ և աշնանը կատարել խոր վարք։ Աշնանացան թափում վիկի ցանկու համար, հողը վարվում և հացահատիկները հնձելուց հետո. դարձանացան վիկի հողը վարվելու յն դարձյալ աշնանը, զորայնդի ձմեռվա ընթացքում անհրաժեշտ քանակությամբ խոնավություն կուտակվի Ծառ տեղերում վիկի ցանկու համար խույս են տալիս աշնանավարից, բայց յերկարտուն վորձերը ցույց են առլիս, վոր առնանավարի դեպքում բերք բարձրանում և 30<sup>0</sup>/<sub>100</sub>-ով։ Աշնանավարից հետո դարձանը հողը փոցխում են, հետո նոր միայն ցանում և Լալ պիսի ճիւղի, վոր առնան վարից յեվ գործան փոցխելուց և կախված վիկի բարձր բերք։

### ՎՈՐՔԱՆ ՍԵՐՄ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՆ

Դա կախված և նրանից, թե ինչ նպատակի համար ենք ցանում։ Անթե սերմ ստանալու համար և, նոր պիտի ցանել. դրա համար պիտի սերմը քիչ վերցնել, իսկ յեթե խոտ ստանալու համար—իստ և ցանվում, սերմը շատ և վերցվում։ Բացի այդ՝ սերմի բանակը կախված և մի շարք պայմաններից, ինչպիսին են՝ հողային, կլիմայական, սերմի ծուռնակության և այլն։

Մեկ հեկտարի համար սովորաբար վերցվում և 160—192 կիլո սերմ, զորի 2/3 մասը (48—64 կիլո) հացահատիկ՝ աշորա, վարսակ կամ դարի, իսկ 2/3 մասը (112—128 կիլո) վիկ։

### ՑԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Պետք և նշել մի հանդամանք, զոր վիկը չի վախենում ցրտից. նրա ճիւղերը դիմանում են նույնիսկ 3—4 աստիճան ցրտի, այդ պատճառով և կարելի յե ցանել շատ վաղ։ Թուսաստանի փորձերը ցույց են առլել, զոր թավոտ վիկը ձմռան ցրտերից ընդարձիկն չի առժուռ։ Աշնանացանի դեպքում ցանվում և սզոտոսին կամ սեղաններին նա Գարնանացանի դեպքում, վաղ դարձանը՝ հենց վոր հնարավոր լինի՝ զաղա դուրս դալ։ Վորքան շուտ ցանվի վիկը, թե աշնանը և թե դարձանը, այնքան ավելի հաջող կլինի բերքը։ Վաղ դարձանացանի դեպքում հնարավորություն և ըստեղծվում այդ ցանքը զնըջացնել այն ժամանակ, յերբ տնտեսությունում ազատ բանվորական ուժեր շատ կան։

### ՑԱՆԵԼՈՒ ԶԵՎԸ

Հերկի տեսակետից վիկն այնքան ևլ պահանջկոտ չէ, զորի պատճառով ևլ, յեթե հողն աշնանից հերկված և լինում, ապա ցանելու ժամանակ կրկնահերկ չի արվում, այլ բավարարվում են

միայն փոցխելով: Վիկը շարքացանով և ցանվում: Կարելի չե ցանել Ձ ձևով—յեթե դաշտի դիրքը թույլ և տալիս—մի ուղղութիւնով ցանում ենք հացահատիկ, հակառակ ուղղութիւնով՝ վիկը: Այդ դեպքում կրկնապատկվում և աշխատանքը. կարելի չե ցանել ահա ինչպէս՝ շարքացանի արկղը բարոկ տախտակներով բաժանում ենք ըստ անցքերի, ստացված մասերում առանձին-առանձին լըցնում ենք վիկի և հացահատիկի սերմեր և արդյունքը լինում և այն, վոր մի շարքը ցանվում և վիկ, մյուսը՝ հացահատիկ: Ձի կարելի յնրեք շարքացանելու դեպքում նախորոք խառնված սերմ ցանել—վորովհետև վիկի և վարսակի խառնուրդի դեպքում նախ կցանվին վիկի սերմերը, հետո վարսակի—և արդյունքը կլինի այն, վոր դաշտի մի մասը կցանվի մաքուր վիկ, մյուսը՝ մաքուր վարսակ:

Յեթե հողամասի դիրքը թույլ չի տալիս ցանքը կատարել շարքացանով, այդ դեպքում հողից չզրկվելու համար, ցանքը կատարում ենք շաղաքանո Այս դեպքում սերմերը դարձյալ չեն խառնում, այլ նախ մեկ ուղղութիւնով վիկի սերմերն են շաղ տալիս, հետո խաչածև ուղղութիւնով հացահատիկի սերմերն ու նոր փոցխում. այս դեպքում ավելի հավասար ցանք և ստացվում: Այսուհետև վիկն առանձին խնամք չի պահանջում: Մեր յերկրի տաք կլիմայական պայմաններում, նախալինոնային շրջաններում վիկի ցանքերը մասամբ ջրելու կարիք են գոլում, իսկ լինոնային շրջաններում, մասնավոր լեթե աշնանացան թափոս վիկ ենք ցանել, ջրելու կարիք չկա:

## ՎԻԿԱ-ՍՇՈՐԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԸ

Գիտենք, վոր վիկն առանձին չի կարելի ցանել, դրա համարել ցանում ենք մի վորեկ հացահատիկի հետ միասին: Այս բայի դեպքում վարվում ենք հետևյալ ձևով. հենց վոր դաշտն ազատվում և այս կամ այն բուսից, սրինակ հացահատիկներից, տնօրինակ սերմեր ենք հողը և կտտարում աշնանացան վիկի և աշորայի ցանքը:

Յանքը կատարվում և, յերբ հողում անհրաժեշտ քանակութիւնով խոնավութիւն կա և վոչ ուշ, քան ոգոստոսի 10—15-ը:

Վերցնում ենք վիկի սերմ 60—90 կիլո, իսկ աշորայի՝ 30—45 կիլո: Ժամանակին կատարած նման ցանքը վաղ գարնանը տալիս և տնտեսութիւնն ահադին քանակութիւնով կանուշ կեր:

Պետք է առաջին հունձը կատարել այն ժամանակ, յերբ աշորան սկսում է ցողուններ դցել—մինչև հասկերի յերևալը: Այդ ժամանակ հնձած աշորայի ցողունները շատ նուրբ են լինում, և անասունները մեծ արտոթակով են ուտում: Յերկրորդ անգամ հնձում ենք հուլիսին կամ ոգոսոսսին: Այսպիսով յերկու անգամ բերք վերցնելուց հետո, միանգամայն հնարավոր է լինում հողը նախապատրաստել հաջորդ կուլտուրայի համար:

## ՎԻԿԱՎԱՐՍԱԿԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԸ

Այս ձևի խառնուրդի ցանքի ժամանակը կախված է ցանքի նպատակից, կանաչ կերի համար և ցանվում, թե՛ չոր խոտի համար: Կանաչ կերի համար ցանքը կատարում ենք վոչ միանգամից, այլ ատրերը դաշտեր տարրեր ժամանակ, յուրաքանչյուր 10 րը մեկ, վարպետի անտեսությունը միշտ ապահովված լինի կանաչ կերով:

Չոր խոտի համար ցանքը կատարում ենք այն ժամանակ, յերբ սկսում են վարսակը ցանել: պետք է վերցնել 1 հեկտարին 100—120 կիլո գիկո և 50—60 կիլո վարսակ: Յերբք վիկի սերմը 2 անգամ վարսակի սերմից ավել կամ պակաս չպետք է լինի, վարսակետե խոտ լինելու դեպքում, խոնավ յեղանակներին ուժեղ աճելով, կողոտի. խիլ քիչ լինելու դեպքում—չոր յերաշտ յեղանակներին, կարող է շուտ չորանար: Կանաչ կերի համար բերքը հավաքում են այն ժամանակ, յերբ վարսակն արձակում է հուրաններ, խիլ վիկն սկսում է ծաղկել: Չոր խոտի դեպքում յերբ վիկը լրիվ ծաղկած է լինում, խիլ վարսակը լրիվ արձակած է լինում հուրանները:

Հնարավոր է 2 անգամ հնձել այն դեպքում, յերբ առաջին քաղը կատարում ենք նախ քան վիկի լրիվ ծաղկելը, վորից հետո վիկը նորից դարդանում ու տալիս է յերկրորդ քաղը: Խիլ յերբ առաջին քաղը կատարում ենք լրիվ ծաղկելուց հետո, այն ժամանակ վիկը հնձից հետո թույլ է դարդանում: Վիկա-վարսակային խառնուրդը բարեհաջող պայմաններում տալիս է 2,5—6 տոնն խոտ:

## ՎԻԿԱՎԱՐՈՒ ԽԱՌՆՈՒՐԴԸ

Այս ձևի խառնուրդը մեղ մտա՝ Հայաստանում, ավելի մեծ նշանակություն ունի, քան մնացած ձևերի խառնուրդները, վարսակետե վարսակն ավելի ջերմություն սիրող է, քան դարին, վորի

պատճառով եւ շատ բարձր շրջաններում չի աճում, մինչդեռ դարին աճում ու լավ բերք է տալիս լիննային շրջանների նույնիսկ ամենաբարձր գյուղերում: Այդ շրջաններում ցանում ենք վիկա-դարու խառնուրդը Հողի նախապատրաստումը, սերմի քանակը և այլն, նույնն է, ինչ վարսակի դեղձուկ և հատկապես սերմի համար ցանքերը սկսած և անպայման ցանվի դարու հետ:

## ՀՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Վիկը հնձվում է, յերբ բույսերը լրիվ ծաղկած են լինում. չի կարելի ուշացնել, թե չէ կոպիտ կեր կտացվի: Հնձելու ժամանակը կախված է նաև յեղանակներից: Խնդիրն այն է, վոր խոտը չորացնելիս, յնթե 2—3 օր մնում է արևի տակ, կորցնում է իր չոր նյութերի մինչև 40%-ը: Ինչ խոտք, վոր անձրևոտ յեղանակներին նույն ժամանակաշրջանում այդ կորուստը շատանում է հասնում է մինչև 100%-ի: Վիկի խոտի նրբությունը և պիտանիութունը պահպանելու համար, անհրաժեշտ է չորացնելու մասին մտածել: Եղևատել, վորպեսզի քիչ մնա արևի կամ անձրևի տակ: Հավաքելիս ի նկատի պիտի ունենալ, վոր քիչ թափվեն ծաղիկներն ու անրևները, վորովհետև այնտեղ են կուտակված անդարար նյութերը:

Այն խոտը, վորը հավաքվել է լավ յեղանակներին ու քիչ է մնացել դաշտում, ունենում է անասունների համար դուրեկան հոտ և ախորժակով են ուտում, քան այն խոտը, վոր շատ է մնացել դաշտում:

## ՍԵՐՄԱՑՈՒ ՎԻԿԻ ՑԱՆՔԸ

Վիկի սերմ ստանալը մեզ մոտ մեծ նշանակութուն ունի: Բլրը որին աճում է ցանքի տարածությունը: Ընդհանրապես մինչև հիմա վիկի սերմի խոշոր մասն ստացել ենք դրսից. այդպես շարունակել չենք կարող, վորովհետև նախ—մտխաղությունները թանդ են նստում և ծանրաբեռնում են մեր յերկաթգծի առանց այն եւ ուժեղ բեռնվածությունը, յերկրորդ՝ վիկի պահանջը հարեւան է մյուս հանրապետություններում այն աստիճանի մեծ է, վոր այդ հանրապետություններում հողի վարող են բավարարել իրենց պահանջները: Շատ անգամ է պատահել, վոր մեր վիկի ցանքերի պլանը չենք կարողացել կտտարել սերմ չունենալու:



պատճառով: Այս ամենն ստիպում են մեզ վիկի սերմարուծութեան վրա մեծ ուշադրութեամբ դարձնել տեղում, մեզ մաս:

Ակիմ ստանալու համար հողը պետք է լավ մշակված լինի դեռ աշնանից, դարձանք կրկնավար արվի, փոցխովի ու նոր ցանովի, խի թավա վիկը պիտի ցանել աշնանը:

Սերմի ցանքի համար սովորաբար վերցնում են 140—160 կիլո վիկի խառնուրդը, վորի 50—100 կիլոն վիկ, խի 50—60 կիլոն՝ դարի: Յանքը պիտի կատարել անպայման շարքացանով:

### ՎԻԿԻ ՍԵՐՄ ՀԱՎԱՔԵԼԸ

Վիկի սերմը չափից դուրս դանդաղ և հասունանում. յերբ ներքևի ունդերը կամ պատիչները հասունացած են լինում, վերին մասում դեռ ծաղիկներ են դանդաղում: Վարդեա վոչ միաժամանակ ծաղիկոց բույս, պատիճներն ու սերմերը հասունանում են վոչ միաժամանակ: Չպետք է սպասել, վորպեսզի վիկի բույսը պատիճները հասունանան, վորովհետև վերևի սերմերը հասունանալիս ներքևիներն արդեն վաղուց հասունացած են լինում, բացվում և սերմերը միջից թափվում են:

Վիկի սերմերի հասունանալը նկատվում է, յերբ պատիճների կամ ունդերի 50<sup>0</sup>/<sub>100</sub>-ից ավելին սկսում են զորշանալ, չորանալ: Սերմացու վիկը հարում են կամ հնձող մեքենայով կամ ձեռքով (դերանդի, մանգաղ): Հնձված վիկը «թափուլներ» են անում (կույտակեր են անում) և 2—3 քրից հետո տեղափոխում են կալահու վայրը: Կալավում և կարիչ մեքենայով, կամ սովորական կամերով: Բամբարում են սովորական ձևով: Մտացված վիկի խառնուրդը դրում են դարուց, աշորայից կամ վարանից անբաղախ մեքենաների միջոցով: Այսպես ահա ստացվում և վիկի մաքուր սերմը: Մտացված սերմերն արևի տակ լավ չորայնելուց հետո, տեղափոխում են նախորդ ախտահանված մաքուր և չոր պահեստներում:

Պահեստներն անպայման պետք է չոր լինեն, վորովհետև խոնավ պայմաններում վիկի սերմերը հեշտութեամբ բորբոսանում են, խի նման սերմերն անշուշտ կորցնում են իրենց ծուլնակութունը:

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍԷ ՉՈՐ ԽՈՏԷ ՁՄՈՒՆԵ ՊԼԱՆՈՒ ՄԵՍԻՆ

Ժամանակին հնձած, լավ չորացրած խոտը, դեռ ևս չի յերաշխալորում տնտեսութեան կերն ապահովելու գրութեանը: Ամբողջ տարվա աշխատանքն ի դուր կանցնի և անասունները սովի կժամանվեն, յիժե տնտեսութեանն այդ բոլորի հետ միասին չբեղազմակերպի խոտի պահպանումը: Այդ հասարակ խնդիր չե, մասնավանդ խոշոր խորհրդային և կոլեկտիվ տնտեսութեանների համար: Դրանից ե կախված ուժբողջ անասունների բազմը ձմեռվա ամիսների ընթացքում: Նախ քան սպանդանման կոնկրետ ձևերի մասին խոսելը, անհրաժեշտ և հիշել մի կարևոր հանգամանք, զա խոտի լավ չորացնելն և անդամ չնչին խոնավութեանը խոտի ղեզում—առաջացնում և այսպես կոչվող խոտի բայրումը: Դրա պատճառը հետևյալում և չորացած խոտի տերևների և ցողունների վրա ապրում են բազմաթիվ բակտերիաներ, վորոնք հասարակ աչքով անտեսանելի յեն: Այդ բակտերիաները խոտին վոչ մի վնաս չեն հասցնում չոր և շատ ցուրտ պայմաններում:

Սուտը խոնավ լինելու դեպքում (անձրևից կամ ձյունից) այդ բակտերիաների համար ստեղծվում են նպաստավոր պայմաններ. սրանք սկսում են արագ դարձանալ. վատ չորացրած խոտը բակտերիաների դործունեյութեան հետևանքով սկսում և տաքանալ, բորբոսնել, փոփր Ահա ինչու պետք ե խոտը լավ չորացնել և այնպես պահել, վոր չխոնավանա:

Սուտը յերկու ձևով են պահում՝ քացողյա և ծածկոցի տակ: Բացողյա պահելն այն շրջաններում և ձեռնառու, վորտեղ ձմեռը մթնոլորտային տեղումներ քիչ են լինում: Մեզ մոտ՝ Հայաստանի անասնապահական շրջաններում, բոլորովին ձեռնառու չե խոտը ձմեռը քացողյա պահել: Ահա ինչեւ.

1. Տարիների վործը ցույց և տալիս, վոր քացողյա պահած խոտն անհամեմատ ավելի մեծ կորուստ ե տալիս. այդ կորուստի պատճառներն են մթնոլորտային տեղումները, (անձրև, ձյուն), քամին, արևը և այլն: Որինակ Տեմիրյազկե անվան գյուղատնտես-


սական ակադեմիային կից ֆերմայի 25—26 տոննանոց խոտի  
դեղից ձմեռվա ընթացքում փշացել էր 2—3 տոնն, վարը կազմում  
է 12<sup>5</sup>/<sub>6</sub>, ավելի խոնավ տարիներում այդ կորուստը հասնում է  
մինչև 30<sup>5</sup>/<sub>6</sub> է:

2. Բացողյա խոտը վոչ միայն քանակով է փշանում, այլ և  
նրա վերակն էլ սոսկալի կերպով վատանում է: Կորցնում է կա-  
նաչ դույնը, վատ համ է ստանում և այլն, այնպես, վոր անա-  
սուններն ավորժակով չեն ուտում:

3. Անասնապահական շրջանների անտեսությունները խոտ-  
հորքը կատարում են տարբեր ժամանակ, որինսակ ներքևի հողա-  
մասերում ավելի շուտ են հնձում, քան վերևի: Տարբեր կերպույ-  
սեր տարբեր ժամանակ են հնձում: Ստացած խոտն առանձին ա-  
ռանձին շատ քիչ է դեղ կազմելու համար, ստիպված պետք է լի-  
նենք փոքրիկ դեղեր պահել:

Այդ բոլոր բացասական յերևույթները չի նկատվում խոտը  
ձածկոցի տակ պահելու դեպքում: Ծածկոցի տակ պահպանված  
խոտը չի փշանում—չի բորբոսնում, չի կոշտանում, չի կորցնում  
իր համն ու դույնը:

Ծածկոցները լինում են 2 տեսակի: Սովորական՝ ասանց  
պատերի և հասարակ ամբար: Յերկու ձևն էլ անտեսության վրա  
շատ եման են նստում, յեթև ի նկատի ունենանք այն խոշոր կո-  
րուստը, վոր ոտանում է անտեսությունը բացողյա պահելուց:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

ԱՌԱՋԱԲԱՆ . . . . .	3
ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԽՈՏԱՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ . . . . .	7
ԱՌՎՈՒՅՑ . . . . .	10
Առվույտի տեղը ցանքաշրջանառութեան մեջ . . . . .	13
Առվույտի մշակութունը . . . . .	15
Վարի խորութիւնը . . . . .	17
Հողի նախապարաստումը . . . . .	»
Ինչպէս պարարտացնելը . . . . .	»
Վորքան սերմ և հարկավոր մեկ հեկտարին . . . . .	18
Առվույտը ցանկը շարքացանով . . . . .	19
Ստախ քաշը տակոտով . . . . .	20
Շարքացանին կանոնավորումը . . . . .	21
Ինչպէս պիտի կանոնավորել շարքացանը . . . . .	»
Յանելու ձևը . . . . .	23
Ինչ խտութեամբ պիտի ցանկը . . . . .	24
Խնամքը . . . . .	»
Ա. պայքար մորախոտերի դեմ . . . . .	25
Բ. ջրելը . . . . .	»
Գ. փոցիկելը . . . . .	»
Պարարտացումը . . . . .	26
Հանքային պարարտանյութեր . . . . .	27
Առվույտի վնասատուները . . . . .	28
Առվույտի հնձի ժամանակը . . . . .	30
Վերմ ստանալը . . . . .	31
Վոր հնձից պետք և սերմ վերցնել . . . . .	33
Առվույտի սերմը հաղածելը . . . . .	»
Առվույտի կախելն ու դանելը . . . . .	»



Գև. ՆԳԱՆ . . . . .	35
Հողի նախապատրաստումը . . . . .	36
Ցանելու ժամանակը . . . . .	37
Ցանելու ձևը . . . . .	»
Ինչ խորութեամբ ցանել . . . . .	»
Խնամքը . . . . .	38
Հնձի ժամանակը . . . . .	»
Կորնդանի սերմարուծութունը . . . . .	39
Սերմացու կորնդանի խնամքը . . . . .	40
Յերբ վերցնել սերմը . . . . .	41
Կորնդանի սերմը հաղածելը . . . . .	41
Վ. Ի Կ . . . . .	43
Վիկի մշակութան նշանակութունը . . . . .	41
Վիկի տեղը ցանքաշրջանառութեան մեջ . . . . .	45
Վիկի մշակութունը . . . . .	46
Հողի նախապատրաստումը . . . . .	»
Վարձան սերմ և հարկավոր մեկն հեկարին . . . . .	47
Ցանելու ժամանակը . . . . .	»
Ցանելու ձևը . . . . .	»
Վիկա-աշորային խառնուրդը . . . . .	48
Վիկա-վարսակային խառնուրդը . . . . .	49
Վիկա զարու խառնուրդը . . . . .	»
Հնձի ժամանակը . . . . .	50
Սերմացու վիկի ցանքը . . . . .	»
Վիկի սերմ հաղածելը . . . . .	51
ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՉՈՐ ԽՈՏԲ ԶՄՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ . . . . .	52

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008731

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

A 18293



*Handwritten notes in Armenian script, including the word 'Երկրորդ' (Second).*

Ա. ՄԱՏԵՎՍՅԱՆ

**ՏԵՅԻՆՅԵ ԿՐԱՆԻ**

Сельхозгиз

1934

Երևան